Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9573

2001

ՀՈՂԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴՐ. ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ:

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1884

2 010
333. 301
Ա-83

7930

Дозволенд цензурою. Тифлисъ. 15 Февраля 1883 г.

Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., д. № 5

333,301
Ա-83
ԿՂ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Այս երկրորդ տետրը աւելի ուշ է լոյս տեսնում, քան մենք ինքներս սպասում էինք։ Թող այս հրատարակութիւնների բաժանորդները ներեն մեզ այդ, ցանկութիւնը չէր, որ պակասում էր մեզ, այլ հանգամանքները թոյլ չտուին գործը արագացնելու։ Այնուամենայնիւ մենք պիտի չանանք մնացեալ հինգ տետրերը աւելի սուղ ժամանակամիջոցներում հրատարակել, որպէս զի մինչ տարի և կէս բոլորը արդէն հրատարակած վերջացած լինի։

1007
31/141

Գալով սոյն գրքոյկի նիւթին, նկատենք, որ նորա մէջ չէ մտնում մեր կարդացած դասախօսութեան ամբողջութիւնը. բայց դորա փոխարէն ֆիզիօկրատների դօքտրինը և մանաւանդ Ռիկարդօի ռենտի թէօրէն շատ աւելի մեծ ընդարձակութիւն են գտած այստեղ, որպէս նաև «հողի արդիւնաբերութեան նուազման օրէնք» կոչուած տնտեսական երևոյթը։ Այդպէս վարուելու մեզ ստիպեց այն կարևորութիւնը, որ ունեն այս երկու վերջին երևոյթները տնտեսագիտութեան մէջ։ Սակայն մեր ջանքը եղած է միայն նոցա հետ ընթերցողներին ծանօթացնել, բայց ոչ քննել նաև այն բոլոր հարցերը, որոնց մէջ այստեղ մեկնուող երևոյթները դեր են խաղում. եթէ այս վերջինը ևս կատարէինք, մեզ հարկաւոր կ'լինէին ամբողջ հատորներ։

Ի վերջոյ թող մեզ ներեն, եթէ այս աշխատութեան մենք մի վերտառութիւն ենք տուած, որը թերևս աւելի մեծ հաւակնութիւն ենթադրել տայ, քան մենք ունենք իսկապէս նորա նկատմամբ։ Նիւթը ամփոփող աւելի աջող վերնագիր մենք դժուարացանք գտնել։

ՀԵՂԻՆԱԿ։

Թիֆլիզ, 10 ապր. 1884։

Տիկիններ և Պարոններ.

Ամեն բան, ինչ այսպէս կամ այնպէս ազդեցութիւն կարող է ունենալ թէ հասարակաց աշխատանքի, դրանով ուրեմն և հասարակութեան կազմակերպութեան վերայ, քաղաքատնտեսական հետազօտութեան առարկայ է և պէտք է լինի։ Առաջի դասախօսութիւնից Դուք որդէն տեսաք, թէ ազգաբնակութիւնը ինչ կողմերից է ուսումնասիրուած. այն երևոյթները, որ մենք այդ առիթով ուսումնասիրեցինք, ամեն քաղաքա-տնտես պէտք է գիտենայ. դրա տարրական գիտելիքներ են և որպէս այդպիսիք, նոցա գիտենալը անհրաժեշտ է ամեն մի լուսաւորեալ մարդուն և ոչ միայն քաղաքատնտեսին։

Բայց ինչպէս է պատահում, որ հողը և հողագործութիւնը հասարակաց երևոյթներ քննող մի գիտութեան առարկայ է։ Մենք շատ լաւ հասկանում ենք, որ հողը գէօլոգիայի, երկրաբանութեան առարկայ է, որովհետև երկրաբանութիւնը քննում է հողի և նորա տեսակների կազմուելը. մենք շատ լաւ ենք հասկանում նմանապէս, որ հողը կամ հողագործութիւնը մի այլ մասնագիտութեան առարկայ է, որը ուսումնասիրում է թէ հողի ֆիզիկան և թէ այն, թէ ինչպէս պէտք է մշակել և վարուել առհասարակ, որպէս զի ցորենը, գարին, հաճարը կամ մի այլ բոյս աւելի լաւ բուսնէ, որ հողը կարելիին չափ շատ արդիւնք տայ. այդ մասնագիտութիւնը—այսպէս անուանուած գիւղատնտեսութիւնն է։ Բայց էլի կրկին՝ ինչ գործ ունէ հողը կամ հողագործութիւնը հասարակաց քաղաքականութեան հետ, քանի որ քաղաքատնտեսութիւնը մարդ-

կային Հասարակութեան ներքին կեանքի յառաջադիմութեան ընթացքն է հետազոտում, ուրեմն նա այդ կեանքի քաղաքականութիւնն է որոշում։

Մեր պատասխանը այդ հարցին կարող է և շատ կարճ լինել. քաղաքատնտեսութիւնը չէ քննում իրերը, այլ միայն իրերի մէջ եղած յարաբերութիւնները. նա չէ քննում հողը, որպէս մի բաղադրութիւն, այլ միայն իբրև հարստութեան մի ֆակտոր, մի պայման, մի ֆակտոր որը միայն այլ ֆակտորների հետ միասին կարող է հարստութիւն առաջացնել, այն է աշխատանքի և կապիտալի հետ։ Քաղաքատնտեսութիւնը քննում է ուրեմն հողը յարաբերութեամբ աշխատանքի և կապիտալի հետ։ Այդ տեսակ ուսումնասիրութեամբ նորան յաջողել է մինչև այժմ գտնել արդէն մի քանի երևոյթներ, որոնց կարևորութիւնը հասարակաց և տերունական կեանքի համար միանգամայն հիմնական, ֆունտամենտալ կարելի է անուանել։ Այդ երևոյթներից մի քանիսի ուսումնասիրութիւնը, տիկիններ և պարոններ, մեր այսօրուայ դասախօսութեան առարկան պիտի կազմեն։

Երբ հողը սկսեց տնտեսական հետազօտութիւնների առարկայ դառնալ, նոյն իսկ այդ հետազօտութիւններովն էր, որ քաղաքատնտեսական գիտութիւնը հիմնուեց։ Այդ՝ 18-երորդ դարումն էր և ֆրանսիացիների գործը։

Նկատելու արժանի հանգամանք։ Տնտեսական գիտութեան հիմնադրութիւնը ծնուեց բողոքից, որովհետև այն հրապարակախօսները և գիտնականները, որոնք իրենց աշխատանքներով քաղաքա-տնտեսութեան հիմքը դրին, սկզբում մտադրութիւն չունէին պաղ և սառը կերպով գիտնական ճշմարտութիւններ որոնել, գիտութիւն հիմնել։ Ոչ, նոցա առաջի և ամենամեծ ջանքն այն էր, բողոքել ֆրանսիական կառավարութիւններից տուած և այն ժամանակ իշխող օրէնքների և վարչական ու տնտեսական մի քանի կարգադրութիւնների դէմ, կարգադրութիւններ և օրէնքներ, որոնք, նոցա կարծիքով, սարսափելի կերպով հարուածել էին ֆրանսիական գիւղական դասի և երկրագործութեան շահերին։

Այդ նոր հրապարակախօսները, որոնց մասին ես այժմ խօսում եմ, յայտնի են ընդհանրապէս ֆիզիօկրատների անուանով, որ նոյնն է, թէ ասել հայերէն՝ հողականներ կամ երկրականներ։ Նոքա այդպէս են կոչուած այն պատճառով, որ, ինչպէս դուք շուտով կ՝տեսնէք, նոքա պնդում էին, որ միայն հողի մէջն է երկիրներ հարստացնող ոյժը, միայն հողն է, որը զուտ արդիւնք է տալիս։ Զուտ արդիւնք. որովհետև այն, ինչ ծախուածից աւելի չէ արտադրում, միթէ կարող է նոր հարստութիւն գոյացնել։

Ասելով 18-երորդ դար, պատկերացրէք Ձեր աչքի առաջ այն ժամանակուայ Ֆրանսիան, ուր կատարվում էր մտաւոր շարժման այն մեծ պրոցեսը, որի կրողներն էին դ՝Ալամբեր, Դիդրո և այլ թէ խորը և թէ փայլուն մտածողներ, որոնք այսպէս անուանած էնցիկլոպեդիստների խումբն էին կազմում. այդ ժամանակումն էր, երբ Վոլտերը տիրապէս իշխում էր ժամանակուայ հասարակաց կարծիքը նաև Ֆրանսիայի սահմաններից շատ շատ հեռու երկիրներում. Մօնտեսքիէօ հրատարակում էր իւր հռչակաւոր գործը «Օրէնքների ոգին», իսկ Ռուսսօի մէջ դեռ դադարած չէր այն մաքուր սրտի խռովութիւնը, որից պիտի զուրս շնչէին նորա «Էմիլը» և յետագայ դեմօկրատական բոլոր շարժումների պատգամագիրը՝ «Հասարակաց Պաշնադրութիւնը։

Այդ 18-դարուայ միջերքումն էր, որ մտածողների

մի խումբ իւր ուշադրութիւնը դարձրած էր դէպի մի այլ, ընդհանրութիւնից դեռ քիչ նշմարած տեսարան, այն տեսարանը, որը ներկայացնում էր բնական հարստութիւնների համար բոլորից զմայլուած ֆրանսիական հողի զարմանալի վատ մշակութիւնը: Բնութեան հեղնութիւն էր արդեօք, թէ ինչ, բայց անյերքելի է որ Ֆրանսիային սորա մեծ մտածող մարդկանց աշխարհք իշխող գրուածների միջոցով ճանաչողը երևակայել անգամ չէր կարող, թէ ինչ թշուառ դրութեան մէջ էր այդ երկրի գիւղացին և աւելի թշուառ քան գիւղացին՝ սորա արհեստը, հողի մշակութիւնը, երկրագործութիւնը: Ֆրանսիացիների աչքը դորա վերայ բացելու համար հարկաւոր եղաւ, որ 1789 թուի մեծ յեղափոխութեան մօտալուտին մի հռչակաւոր անգլիական գիւղատնտես Արթուր Իւնգ, իւր անձնական հետաքրքրութեան համար գար Ֆրանսիա, ճանապարհորդէր բոլոր գաւառներում և հրատարակէր իւր տպաւորութիւնները: Բայց այդ գրքով մի իսկական հարուած էր, որ մի անգլիացի տուեց ֆրանսիական ինքնասիրութեան: Ինչ ասել կ'ուզէ, որ Արթուր Իւնգի գրուածքը մնաց իւր հրատարակուելու օրից մի հռչակաւոր գիրք և մնում է նա ցայսօր, որպէս մի պատմական թանկագին յիշատակ: Երկրագործութեան նոյն այդ թշուառ դրութիւնն էր, որը առաջ բերեց ֆրանսիական ֆիզիօկրատներին, երկրականներին. գրողների մի ամբողջ շարք, որի առաջի օղակները բացեցին մի իւր ժամանակին արժանիին չափ չգնահատուած գրող՝ Բուագիլբեր և դորա հետ գրեթէ միասին Ֆրանսիայի մի մեծ և նշանաւոր մարդ, մարշալ Վօբան, որոնք երկուսն էլ հրատարակեցին իրենց գրուածները 18. դարուայ սկիզբներում: Սակայն այդ երկու գրողները չկարողացան իրենց դիտողութիւնների մէջ հասնել գիտական ճշտութեան բարձրութեան. նոքա մը-

նացին միայն գրողներ առանց այն ազդեցութեան, որը կարողանար մի գիտնական շկօլա, մի դպրոց հաստատելու: Դպրոց հիմնելը վերապահած էր մի այլ գրողի, մի ուժեղ տաղանդի, այն է Քենէին: Այդ Քենէն էր, որը հանդիսանում է ֆիզիօկրատական դպրոցի գլուխը, ուր հռչակուեցին, Քէնէից զատ, տնտեսագէտներ, որպէս Մերսիէ դը լա Ռիվիէր, հայր Մօրելլէ, հայր Բուրդօ և այլք, բայց մանաւանդ Տիւրգօն, որի գրական և գիտնական տաղանդի համար միակ նորա հոգու և սրտի ազնուութեան մէջ կարելի է մի ճիշտ համեմատութիւն գտնել:

Սկսենք ուղղակի Քէնէի դօկտրինից և ծանօթանանք նորա վարդապետութեան հիմնական գաղափարի հետ: Ամենքին յայտնի է, որ հարստութիւնը, այսինքն այն, ինչ կարող է ծառայել մարդուս պիտոյքներին բաւականութիւն տալու, միայն արտադրութեամբ կարելի է ստեղծել: Որոնք են մի երկրի հարստութիւնները? Այն ոյժերը, որոնք գետնի մէջ են և որոնք կեանք են տալիս այն բոլոր բուսեղէններին, որ մենք գործ ենք ածում մեզ սնունդ տալու համար. յետոյ այն բոլորը, որպէս գործարաններ, մեքենաներ, գործիքներ և այլն, որոնց միջոցով մենք պատրաստում ենք շորեղէններ մեզ համար և այլն և այլն. բայց և հացը և բամբակը և բուրդը և շորեղենները և վառելիքը և այլն պէտք է նախ արտադրել, որպէս զի նոքա իսկական հարստութիւններ կարողանան համարուել: Բայց հարստութիւն արտադրելու համար հարկաւոր է արդէն ունեցած հարստութիւնից մսխել. նշանակում է, թէ մի երկրի համար իսկական հարստութիւնը այն է, ինչ որ կարողանում է ծածկել միսիր և մի բան էլ աւելցնել: Եթէ մի փութ ցորեն ցանեմ, ուրեմն փչացնեմ և միայն մի փութ հնձեմ և դեռ այդ մի փութը

ստանալու համար ես գործիքներ փչացնեմ, որոնք նույնպէս երկրի հարստութիւններ են, այդ դեռ չէ նշանակում, թէ երկիրը մի փութ ցորենով հարստացաւ: Երկիրը կ'հարըստանայ մի բանով, եթէ այն մի փութ ցանած ցորենի տեղ ես ստանամ այնքան ցորեն, որ նորա արժէքը աւելի լինի, քան այն բոլորը, ինչ որ մսխուած, փչացրած է թէ ցորենով և թէ գործիքներով և այլն: Այդ հասկանալի է. միայն թէ, տիկիններ և Պարոններ, ես Ձեզ պէտք է մի բանից զգուշացնեմ. այն է, որ «ՊՐԾԷ» բառը չշփոթէք գին բառի հետ. մի փութ ցորենի բուն արժէքը—նորա այն ոյժն է, որով ցորենը կամ հացը կարողանում է մարդուս քաղցը հագեցնել. ուրեմն ցորենի գինը լինի 1 ռուբլի թէ 10 ռուբլի, նորա արժէքը դորանով չէ փոխվում: Եթէ մի երկիր սովորապէս տասը միլիոն փութ ցորեն էր արտադրում տասը միլիոն ռուբլու արժողութեամբ, մի այլ տարի, անառատութեան պատճառով, կարող է այդ երկիրը ունենալ միայն հինգ միլիոն փութ ցորեն, բայց այդ ցորենը կարող է ծախուել քսան միլիոն ռուբլիով նույն իսկ երկրացիների վերայ: Երկիրը, որպէս տեսնում էք, նորանով հենց չէ հարստանում, որ գները բարձրանում են:

Ուրեմն այստեղ խօսքը բուն արժէքների վրայ է և ոչ գների վրայ: Արդ, Քենէն պնդում է, որ նոր արժէքներ ստեղծել կարող է միայն հողը, հողագործութիւնը և ոչ այլ արհեստներ: Քենէն հակադրում է հողագործութիւնը արհեստներին և գործարաններին և քննում է այն հարցը, թէ ինչ է նստում հասարակութեան վերայ հողագործական արդիւնքներ արտադրելը և ինչ է նստում նույն հասարակութեան վերայ՝ գործարանական արդիւնքներ արտադրելը և նա ջանում է ապացուցել, որ մի գործարանական արդիւնք (օրինակի համար, մի դանակ) արտադրելու համար հասարակութիւնը ուղիղ նույնքան պէտք է եղածից փչացնէ, որ-

քան նա այդ փչացածից ստեղծում է, մինչդեռ այդ հողն է միակ, որը կարող է աւելի տալ հասարակութեան, քան նա իւր տուածի համար զոհ է պահանջում:

Բայց կարողանում է Քենէն արդեօք իւր այդ ասածը՝ դրական կերպով, համոզեցուցիչ կերպով ապացուցել? Դորա մասին մենք մեր կարծիքը յետոյ կ'յայտնենք, առայժմ տեսնենք, թէ որոնք են նորա ապացոյցները: Այդ նպատակով թոյլ տուէք խօսք առաջ բերել այստեղ թարգմանութեամբ իմ մի գերմանական աշխատանքից այն տողերը, որոնք վերաբերում են այդ հարցին և որոնք, իմ կարծիքով, ամենից լաւ ամփոփումն են ֆիզիոկրատների և առանձնապէս Քենէի դօքտրինի:

«Իւր հետազօտութեան մէջ հարստութիւնների ծագման մասին Քենէն գտնում է, որ հարստութիւնները նիւթական իրերի մէջ բաղկացած լինելով, իսկ նոր նիւթական իրեր միայն հողից ստանալ կարելի լինելու պատճառով, երկրագործական արտադրութիւնը աղգային տնտեսութեան այն ճիւղն է իրը, որը միակ նոր արժէքներ, ուստի և նոր հարստութիւններ արտադրել կարող է: Տնտեսութեան այլ ճիւղերը, որպէս գործարանութիւնը, թուում են Քենէին թեպէտ օգտակար, բայց անարդիւնաւէտ այն մտքով, որ նոքա նոր նիւթական իրեր չեն ստեղծում: Գործարանութիւնը տալիս է արդէն գոյութիւն ունեցող նիւթերին նոր ձևեր (բամբակից, որը արդէն կայ և ստացուած է հողից, նա շինում է մահուդ և այլն, ուրեմն բնութեան կամ հողից ստացած նիւթին գործարանութիւնը տալիս է նոր ձև, մահուդի ձև), բայց նա նիւթ չէ ստեղծում: Գործարանական արդիւնքների արժէքը որոշվում է նայած աշխատանքի, այսինքն նայած բանուորների աշխատանքի արժէքին, իսկ աշխատանքի արժէքը որոշվում է նայած թէ որքան է նստում աշխատանքը,

որքան է սպառում բանուորը. իսկ սպառելու բաները բոլորն էլ հողային արդիւնաբերութիւնը, երկրագործութիւնն է տալիս: Այդ պատճառով իբր գործարանութիւնը արդիւնքը աճեցնող չէ և կամ, (որպէս ընդունուած է տընտեսագիտութեան մէջ ասել) Վերարդի-նաբերող չէ, այսինքն նա չէ ստեղծում աւելի, քան նա սպառում է, այլ այնքանի է ստեղծում, որքան նա սպառում է: Մինչդեռ հողը ոչ միայն այնքան է տալիս, որքան նա բանեցնում է, այլ աւելի քան այդ. (օրինակ մի փութ ցորենի տեղ մենք ստանում ենք տասը փութ և այլն): Դորանից հետևցնում է Քենէն, որ հողի մշակութիւնը միայն կարող է մի նոր մարդկային արարածի կեանքի համար հարկաւոր միջոցները մատակարարել. իսկ մի նոր արարածի համար ապրելու կարելիութիւն ստեղծել, տնտեսութեան ամենամեծ նպատակն է, թէպէտ և աւելի ցանկալի է, որ, երբ մի երկրի կենսական միջոցները աւելանում են, փոխանակ ազգաբնակութիւնը նոյն չափով աւելցնելու, եղածներին աւելի հարստացնել: (Հարստութիւն քաղաքատնտեսութեան մէջ կոչվում է ամեն ինչ, որը կարելի է դարձնում մարդուն բաւականութիւն տալ իւր այն պահանջներին, որոնք համապատասխան են նորա մարդկային կոչման, որ նոյնն է ասել՝ թէ յառաջդիմութեան, քանի որ մարդկութեան կոչումը դորանից աւելի դեր նպատակ չէ ճանաչում: Քենէի ասելը այն է, որ եթէ դիցուք հողի մշակութիւնը այնքան ընդարձակուեցաւ և կամ կատարելագործուեց, որ կարելի եղաւ շարունակ դիցուք 1000 փութ ցորեն աւելի ստանալ, քան առաջ, փոխանակ որ այդ 1000 փութ ցորենով մենք մի 100 նոր մարդիկ պահենք, կարող ենք այդ ցորենը տալ մի այլ մարդու, որը մինչ այժմ ինքը հողը մշակելով պէտք է իւր հացը ճարէր, որպէս զի նա կարողանայ մի այլ արհեստով պարապել, կամ կրթութեան համար պատրաստուել և այլն. մի խօսքով, որպէս զի միակողմանիութեան տեղ աշխատանքների մէջ բազմակողմանիութիւն մտնէր: Իհարկէ, իսկապէս ոչ մի հասարակութիւն այդ տեսակ վճիռներ չէ կայացնում, բայց պէտք է համաձայնուել այն բանի մէջ, որ եթէ աշխարհքիս երեսին բոլորեքեանք երկրագործներ չեն, բոլորեքեանք իսմ ամենաանհրաժեշտ կերպով պէտք ունեն երկրագործական արդիւնքների մէջ. նշանակում է, թէ հողային բերքերի արտադրութիւնը, յառաջդիմութեան մէջ գտնուող երկիրներում, կատարվում է և պէտք է կատարուի աւելի քիչ մարդկերանց ձեռքով, քան այդ երկրում բնակիչներ կան. իսկ այդ կարելի է միայն այն հանգամանքներում, երբ կամ հողը շատ բերրի է և կամ երկրագործական արհեստը կատարելագործուած է:)

«Քենէն յայտնում է այդ պատճառով երկրագործութիւնը խրախուսելը, որպէս տերութեան ամենաշահաւէտ գործը:»

Ես Ձեզ առաջուց յայտնեցի, տիկիններ և պարոններ, որ ֆիզիոկրատների այդ ուսումը, այդ վարդապետութիւնը մի նպատակ ունէր, այն է, յանուն զիտութեան, բողոքել կառավարչական այլ և այլ երկրագործութեան համար վընասակար կարգադրութիւնների դէմ: Այդ կարգադրութիւններից ամենագլխաւորը այն էր, որ, սկսած Լուդովիկոս XIV-ի մեծ մինիստր Կոլբերի օրերից, ֆրանսիական կառավարութիւնը յաճախ արգելում էր, որ, այդ երկրից ցորեն դուրս բերեն, ցորենը արտահանեն դէպի դրացի երկիրներ: Կոլբերի միտքը այն էր, որ դորանով, որքան կարելի է, աժանանայ ցորենի գինը, որպէս զի դորանով բանուորի վարձը ևս, որքան կարելի է, իջնէ, բանուորի աշխատանքը աժան լինէ: Կոլբերի վերջնական մտադրութիւնը կայանում էր

նորանում, որ, բանտրի վարձը ածան դարձնելով, ֆրանսիական գործարանները կարողանային աւելի ածան գնով ապրանքներ դուրս բերել, քան օտար երկիրները, Անգլիան, Հոլլանդիան և այլն և դորանով Ֆրանսիան կարողանար խլել միւս երկիրներից գործարանական արդիւնքների առուտուրը։ Կոլբերին մասամբ աջողեց հասնել իւր նպատակին և այդ մանաւանդ Կոլբերի ժամանակներիցն է, որ Ֆրանսիայում սկսեց ծաղկել նուրբ գործուածների արդիւնաբերութիւնը, որ և տեւում է ցայսօր։ Խրախուսուած Կոլբերի ջրինակից (նա մինիստր էր ըսկսած 1660 թուականից մինչ 1683), յետոյուայ Ֆրանսիական բոլոր կառավարութիւնները սկզբմունքով արդէն հակառակ էին ցորենի արտահանման, մինչև անգամ ամենաառատ և ամենաածան տարիներում։ Այդ սիստիմը, որը խստութեամբ տևեց մինչև Տիւրգօի մինիստրութիւնը կամ Լուդովիկոս XVI առաջի տարիները, ուրեմն Կոլբերի մահից յետ աւելի քան իննրսուն տարի, այն աստիճանի սեղմեց ցորենի գները, աւելորդ ցորենը ծախելու անհընարաւորութեան պատճառով, որ, ինչպէս այդ շատ փաստերով ապացուցուած է, վաղ մշակվող հողերի մի մեծ մասը, ֆիզիոկրատների ժամանակ, բարձի թողի էր արուած, մնացել էր անմշակ. գիւղացին ոչինչ շահ չէր գտնում հողը առաջուայ չափ տարածութեամբ մշակել և կամ մի որ և է կատարելագործութիւն մտցնել երկրագործութեան սովորական սիստեմների մէջ։ Առաջանալու, ծաղկելու փոխարէն, երկրագործութիւնը, մի խօսքով, ընկաւ յետադիմութեան մէջ։ Եւ այս ճիշտ է, որ հողագործութիւնը 18. դարուայ Ֆրանսիայում չէր վայելում այն յարգ ու պատիւը, ինչ նա վայելում էր առաջ, դեռ 17. դարուայ սկիզբներում, Հենրիկոս IV մեծ թագաւորի և նորա մեծ մինիստր Սիւլլի՝ի ժամանակներով և մինչև անգամ նոցանից

մի քանի տարիներ յետոյ երկրագործութիւնը այդ երկրում ամենևին այն յարգը չէր վայելում, ինչ նա վայելում էր նոյն իսկ 18. դարում այլ երկիրների, մանաւանդ Անգլիայի մէջ. և մինչդեռ Ֆրանսիայում երկրի ամբողջ երրորդ մասի սեպհականատէրերը, ազնուականները, Լուդովիկոս XIII-ի մինիստր Ռիշելիէի և Լուդովիկոս XIV-ի ժամանակներից ի վեր, թողնելով իրենց կալուածները կապալառուներին, իրենց սովորական բնակութեան տեղին ընտրել էին քաղաքները և մանաւանդ Փարիզ մայրաքաղաքը և, մասնակից պալատական բոլոր շռայլութիւններին, միանգամայն խորթացել էին գիւղական կեանքին, Անգլիայի ազնուական դասը, ընդհակառակը, նոյն ժամակներում ներկայանում էր երկրագործութեան յառաջդիմութեան ամենամեծ կրողը, տեղեակ ամեն բանի, ինչ պիտի հետաքրքրէ մի հողատիրոջ։

Այդ էր ահա, ամենակարճ կերպով նկարագրած, երկրագործութեան այն դրութիւնը Ֆրանսիայում, որի դէմ բողոքել հարկաւոր համարեցին ֆիզիոկրատները։ Նոքա արտայայտեցին այդ բողոքը յանուն տերունական ամենարարձր շահերին, առաջ նետելով մի դօքտրին, մի վարդապետութիւն, որի իմաստը մենք վերը բացատրեցինք, բայց որի նպատակը բոլորովին գործնական բնաւորութիւն ունէր, այն է՝ համոզել կառավարութեան, որ ցորենի առուտուրը, ցորենի արտահանումը երկրի սահմաններից դուրս, դէպի դրացի օտար երկիրներ ոչ միայն չպիտի արգելել, այլ նա պիտի խորախուսուէր, ազատ դարձնելով ցորենի առուտուրը։ Նոցա ասելով, ցորենի արտահանման առևտուրի ազատութիւնը թոյլ կ՝տայ, որ ցորեն գնելու պահանջը շատանայ. իսկ դորա հետևանքը կ՝լինի երկրագործութեան ընդարձակումը, որը, նոցա դօքտրինի հա-

մաձայն, միակ ընդունակ է ը-ա, այսինքն ծախսից աւելի արդիւնքներ տալ երկրին, հասարակութեան, տերութեան:

Ես պատմեցի Ձեզ, տիկիններ և պարոններ, թէ ֆիզիոկրատների վարդապետութեան բովանդակութիւնը և թէ այն հանգամանքները, որոնք դրդեցին այդ վարդապետութեան երևան գալուն: Սակայն դիտենալու արժանի է և այս, որ ֆիզիոկրատների դօքտրինը, վարդապետութիւնը ոչ այնքան նշանաւոր է բուն քաղաքատնտեսական գիտութեան համար, որքան այդ գիտութեան պատմութեան համար: Նա կարևոր է այդ գիտութեան պատմութեան համար այն պատճառով, որ ֆիզիոկրատների դօքտրինով առաջի լուրջ փորձն էր արուած գիտնականապէս ճանաչել մի երկրի հարստութիւնների բուն արմատը, նոցա գոյանալու սկզբնական պրոցեսը: Այդ ֆիզիոկրատներն էին, որոնք առաջին անգամ համարձակուեցան, հակառակ սովորական և ամենուրեք տարածուած գաղափարների, որոնել մի երկրի նիւթական կարողութիւնը կազմող հարստութիւնները մի այլ բանի քան փողի՝ արծաթի և ոսկու մէջ, որոնց քանակութեամբ մինչև այն ժամանակ ընդունուած էր չափել երկիրների հարուստ թէ աղքատ լինելը և որոնց ձեռք բերելու համար տերութիւնները ամեն հնարաւոր միջոց գործ էին դնում: Ուժեղ և խելացի քննադատութեան ենթարկել հասարակութեան բարձր և ստորին, կրթուած թէ անկիրթ դասակարգերի մէջ հաւասարապէս իշխող և իբր թէ անհատական փորձառութիւններով ճշմարտութեան կնիքը ստացած կարծիքները—մեծ գործ պիտի համարուի, և արդիւնաւէտ, որովհետև միայն այդտեսակ քննադատութիւնն է, որը կ'ստիպէ մարդուն աչքը դարձնել իրերի մակերևոյթից աւելի խորը տեսնելու համար. իսկ իրերի խորքերը քննելով, մարդս անշուշտ կ'գտնէ մի որ և է

արմատ, որը միացնում է հասարակ աչքին իրարից տարբեր բաներ երևցող իրերը: Այդ տեսակ վարաւելով, քիմիկոսներին յաջողեց ապացուցել, որ այն բոլոր առարկաները, որ մենք տեսնում ենք աշխարհքիս երեսին, ինչ ձևի և գոյնի, ինչ տեսակ փայլի և ինչ համի և նոքա լինեն, նոքա բոլորը միայն զանազան բաղադրութիւններ են այն սկզբնական նիւթերի, այն պարզ մարմինների, որոնց թիւը զարմանալի փոքր է համեմատած աշխարհքում գտնուող և աչքին իրարից տարբեր երևցող իրերի թուի հետ: Բոլոր գիտութիւններին այդ մի բանը յատուկ է՝ որոնել երևոյթների սկզբնապատճառները, որոնել ամբողջութիւնը իշխող սկզբմունքները, պրինցիպները: Այդ մտքով ֆիզիոկրատների մտածողութեան եղանակը կատարեալ գիտնական ոգով է իշխուած, որովհետև նոքա ջանացին հարստութիւնների ծագումը գտնել և նոքա գտան, այդ, որպէս Ձեզ այժմ յայտնի է, այն զուտ արդիւնքի մէջ, որը տալիս է հողը սորան խելացի կերպով մշակելու զայմանով. հողից ստացած այդ զուտ արդիւնքն է, որը միակ հարստութիւն կարելի է անուանել, որովհետև, նոցա դօքտրինի համեմատ, այդ զուտ արդիւնքի համար հասարակութիւնը իւր կողմից ոչինչ չէ զոհում. այդ զուտ արդիւնքը բնութեան պարգև է: Ըստ ֆիզիոկրատների, գործարանական արդիւնքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ նոյն զուտ արդիւնքները, որ մենք ստանում ենք հողից, միայն թէ օգտակար շինած հասարակութեան համար, յարմարեցրած հասարակութեան պահանջներին. և այդ պատճառով գործարանութիւնը ՀԷՐԾԷՆ-ՆՈՔԷՐ չէ, նա նոր արժէքներ չէ ստեղծում, բայց չնայած դրան՝ գործարանութիւնը օգտակար է, նոյն ֆիզիոկրատների կարծիքով:

Ես ասացի Ձեզ, տիկիններ և պարոններ, որ ֆիզիոկ-

ռատների դոքտրինը ոչ այնքան այժմեայ քաղաքատնտեսական գիտութեան համար կարևոր է, որքան այդ գիտութեան պատմութեան համար։ Ինչու ? որովհետև ֆիզիոկրատների դոքտրինը, որը իւր ժամանակին մեծ աղմուկ հանեց և նշանաւոր ներկայացուցիչներ ունեցաւ, տեղ տուեց մի այլ ուսման, մի այլ դոքտրինի, մի այլ ըսկզբմունքի, որը գիտութեան համար իրանից աւելի արդիւնաւէտ հանդիսացաւ։ Այդ նոր ուսման առաջի և ամենագլխաւոր հիմնողը ու ներկայացուցիչը եղաւ շոտլանդացի Ադամ Սմիթը։ Սա ստեղծեց քաղաքատնտեսութեան մի սիստեմ, որը իւր լայնածաւալութեամբ ըմբռնում է բոլոր տնտեսական երևոյթները, ազատելով այդպիսով քաղաքատնտեսութիւնը այն նեղ սահմաններից, որի մէջ նա կ'մնար փակուած, եթէ Քենէի մտքերը շարունակէին իշխել։ Այժմ ժամանակը չէ խօսել Ադամ Սմիթի և նորա սիստեմի մասին, որովհետև այդ սիստեմը, հիմնուած լինելով գլխաւորապէս աշխատանքի գաղափարի վերայ, ուղղակի կապ չունէ մեր այսօրուայ դասախօսութեան համար ընտրած նիւթի հետ, որը հողն է և հողագործութիւնը. դորա մասին մենք առիթ կ'ունենանք խօսելու մեր հետևեալ դասախօսութեան մէջ. այստեղ միայն մոռացած չլինենք այս հաստատ բանը հաղորդելու, որ ֆիզիոկրատները առաջիններն էին, որոնք փորձեցին տնտեսական երևոյթների մէջ հիմնական սկզբմունքներ գտնելու և որ Ադամ Սմիթը, նախ քան իւր սեպհական սիստեմի ստեղծելը, քաջ տեղեակ էր ֆիզիոկրատական ուղղութեան և անձնապէս ծանօթ դորա նշանաւոր ներկայացուցիչների հետ։ Եւ այդ դեռ բաւական չէ. Ադամ Սմիթը ընդունել էր իւր սիստիմի մէջ թէօրէներ և հայացքներ, որոնք մանաւանդ ֆիզիոկրատների կողմից ուսումնասիրուած և հաստատուած էին առաջին անգամ։

Բայց ինչի մէջ պիտի արդեօք ֆիզիոկրատների ուսման գլխաւոր պակասութիւնը որոնել?

Եթէ ֆիզիոկրատների ուսումը երկար կեանք չունեցաւ, դորա պատճառը այդ ուսման միակողմանիութեան մէջ պիտի որոնել։ Տեսնելով մի երկրի հարստութիւնների միակ աղբիւրը հողի տուած զուտ արդիւնքի մէջ, ֆիզիոկրատները միանգամայն անտես էին առնում, որ մի երկիր սահմանափակ տարածութիւն ունէ, որ ուրեմն հողագործութիւնը չէ կարելի ուզեցածին չափ ընդարձակել. իսկ երկրորդ, որ հողի մշակութեան կատարելագործութիւնը ոչ միայն դանդաղ քայլերով է առաջանում, այլ և այդ կատարելագործութեամբ հողի զուտ արդիւնքը, որպէս ներքև կ'ապացուցուի, արած զոհերին համեմատ չէ աւելանում և կամ գոնէ ոչ միշտ։ Եթէ երկիրների հարստութիւնը հողի տուած զուտ արդիւնքի չափով պիտի չափուի, ապա ինչ պիտի անէ մի երկիր, որի համար հասած է արդէն հողի մշակութեան այն շրջանը, երբ աշխատանքը առաջուայ չափով չէ գնահատվում, արդիւնքի նուազելու պատճառով ? Ակներև է, որ, ըստ ֆիզիոկրատների դոքտրինի, մի այդպիսի երկիր պիտի սկսէր նուազառ նուազ աղքատանալ։ Արդ, Եւրոպայի ամենահարուստ երկիրները - Անգլիան, Բելգիան, Ֆրանսիան և այլն, արդէն բաւականի ժամանակէ ի վեր մասամբ հասած են այդ կէտին և, չնայած դորան, նոքա շարունակում են հարստանալ. այդ երևում է արդէն նորանից, որ նոքա բոլորը առաջդիմութեան մէջ են գրեթէ ամեն կողմանէ։

Ֆիզիոկրատների ուղղութիւնը միակողմանի է, ասացի։ Նոքա նայում են շինուած, ձևակերպած, գործարանական եղանակով արտադրած իրերի վրայ միմիայն որպէս օգտակար իրերի վրայ, չուզելով յատկացնել նոցա նոր հարստութիւններ գոյացնելու ոյժը։ Բայց մի երկրի հարստութիւը արդեօք

միայն հում նիւթերի մէջ է կայանում, արդեօք հարստութիւն արտադրել չէ, երբ մի իր մի ձև է ստանում, որը միայն համապատասխան է մարդու պահանջներին? Արդեօք այն փորձը, այն գիտութիւնը, որոնք հարկաւոր են հում նիւթերից օգտակար գործուածներ, ֆաբրիկատներ շինելու համար և որոնք ձեռք են բերվում ամենամեծ զոհաբերութիւններով և աշխատանքով թէ անհատների և թէ հասարակութեան կողմից—դոքա դրական հարստութիւններ չեն մի երկրի համար? Հետևելով ֆիզիօկրատների գաղափարներին, քաղաքատնտեսութիւնը պիտի անտես առնէր այդ բոլորը: Այդ հանգամանքն էր, որ ինձ ստիպեց ասել, թէ ֆիզիօկրատների դօքտրինը բաւականաչափ ընդարձակ չէ, որպէս զի նա գիտութեան հիմք կարողանար դառնալ և այդ պատճառով նա տեղ պիտի տար Ադամ Սմիթի ուսման, որը աւելի լայն է ըմբռնում տնտեսական երևոյթները: Բայց ֆիզիօկրատների թէօրէն հողի արդիւնաւէտութեան մասին չպիտի հենց այդ պատճառով արհամարուի. բացի նորանից, որ նա զուրկ չէ մտքի խորութիւնից և բացի նորանից, որ նա հիմնուած է դիտողութիւնների վրայ, որոնցից մի քանիսը անցել են գիտութեան մէջ, որպէս սորա սեպհականութիւն, այդ թէօրէով առաջին անգամ փորձ փորձուեցաւ տնտեսական երևոյթները քննադատական խիստ կանոններով դիտել և նոցա մէջ իշխող պրինցիպները ճանաչել:

Մի զարմացէք, ուրեմն, որ ֆիզիօկրատների շարադրութիւնները, շնորհիւ նոցա ձգտումների անկեղծութեան և քննադատական լրջմտութեան, պահպանել են դեռ մինչ օրս նորութեան այն հրապոյրը, որը այնքան յատուկ է բուն գիտնական հետազօտութիւններին և որ նոցա ընթերցանութիւնը անհրաժեշտ է համարուած ամեն մարդու համար, որը քաղաքատնտեսութիւնը միմիայն

պատահական գրուածքներով չէ ուզում ուսումնասիրել:—

Այսքանը բաւական է ֆիզիօկրատների մասին: Դառնանք այժմ այլ հետազօտութիւններին հասարակաց ծանրակշիռ հարցերի վերաբերեալ, որոնց մէջ հողը և հողագործութիւնը գլխաւոր նիւթն են կազմում:

Տիկիններ և Պարոններ!

Հասարակաց արդարութիւնը մի ազգի խաղաղ և յառաջադէմ կեանքի ամենահիմնական սկզբմունքներից մէկն է. արհամարհել նորան կ'նշանակէ արհամարհել հասարակութիւնը ինքը: Հասարակաց արդարութիւնը կայանում է սորանում՝ վայելել տալ հասարակութիւնը կազմող իւրաքանչիւր անդամին նորա աշխատանքի արդիւնքը և իւրաքանչիւրին մասնակցել տալ ընդհանուր հասարակաց կամ տէրունական ծախքերի մէջ ըստ չափու կարողութեան: Ես մտադրութիւն չունիմ այժմ Ձեզ զբաղցնել այդ բարդ և կնճռոտ հարցերով և յիշել Ձեզ մի առ մի, թէ ինչ վիճաբանութիւնների և թէօրէների տեղիք է տուած արդիւնքների բաժանման խնդիրը, այն խնդիրը, որը, բան-որոչիչ կամ հասարակական հարցի անունով, կազմում է եւրոպական ամենաառաջադէմ երկիրների ներքին քաղաքականութեան գորդեան հանգոյցը: Մեր խօսքը մի աւելի մասնաւոր հանգամանքին է վերաբերում, բայց որը առաջինի հետ այն մտքով կապ ունէ, որ նա ցոյց է տալիս, թէ, անհատական սեպհականութեան իշխանութեան ներքոյ, կարելի է, որ մի յայտնի դասակարգ և կամ մի մասնաւոր անձը իրան սեպհականացնէ և ուրեմն վայելէ մի արդիւնք, որը ոչ նորա սեպհական կամքով և ոչ նորա աշխատանքով է ստեղծուած, այլ որը առաջացած է հասարակութեան ընդհանուր ջանքով, հասարակութեան, ազգի, երկրի ընդհանուր առաջադիմութեան պատճառով:

Այդ թեմային ծառայում է Ռիկարդօի այսպէս կոչուած Ռենտի թէօրէն։ Դաւիթ Ռիկարդօն ամենանշանաւոր քաղաքատնտեսական մտածողներից մէկն է և գրում էր մեր դարուայ առաջի քառորդում։ Իբրև մտաւոր, իբրև ըմբռնող ոյժ—Ռիկարդօին կարելի է մեծ մտածողի անունը տալ։ Սկզբնապէս վաճառականութեամբ պարապած լինելով, Ռիկարդօն ասպարէզ դուրս եկաւ ոչ իբրև քաղաքատնտես և, տալով իւր 1817 թուին հրատարակած գրքուածքին «Քաղաքատնտեսութեան և գնահատութեան սկզբմունքներ» վերնագիրը, նա իսկապէս չուզեց մի ձեռնարկ տալ հասարակութեան, այլ այդ գրքուածքով նա ուզեց միայն հաղորդել հարցով հետաքրքրվողներին և մասնագէտներին իւր սեպհական հետազօտութիւնների արդիւնքները։ Նորա գրելու և մտածելու եղանակը վերին աստիճանի աբստրակտ է, վերացական է և կամ, աւելի լաւն ասած, ենթադրական է. այսինքն, նա այլապէս չէ խօսում, քան ենթադրելով հանգամանքները այնպէս, որպէս նա ուզում է և լոգիկական հետևանքներ դուրս բերելով իւր ենթադրած հանգամանքներից։ Այդ արդէն ընթերցողի բանն է, լաւ ըմբռնած լինելով նորա մտքերը, պատշաճել նորա խօսքերը հանգամանքներին, երբ հարկաւոր է իսկական, իրական երևոյթները ճանաչել, մեկնել։ Ռիկարդօի ոճը այդ իսկ պատճառով սուր է, որպէս լոկ լոգիկայի վերայ հիմնուած ամեն մի դատողութիւն և համարձակ, որպէս այդ յաճախ պատահում է, երբ մարդս երևաթային շղթաներով իրան կապուած չէ համարում դաղափարին համապատասխանող իրական, շատ անգամ կանոնին ոչ կատարելապէս ճշտութեամբ ենթարկուող մասնաւոր դէպքերի հետ. երբ նա, միայն գլխաւոր մտքով զբաղուած, երկրորդական հանգամանքների վրայ ուշադրութիւն չէ դարձնում և այդպիսով տեղիք է տա-

լիս թշնամական հարձակումների, որոնք նա աւելի անարդար են լինում, որքան դոցա հեղինակները առաջնի կատարեալ հակառակն են գործում՝ մի կողմ թողնելով գլխաւոր միտքը և զբաղուելով միայն երկրորդական կէտերով։

Բայց դառնանք դէպի հարցը և տեսնենք, ինչումն է կայանում Ռիկարդօի Ռենտի թէօրէն, որը այնքան հարուստ է հետևանքներով և որը քաղաքատնտեսութեան և քաղաքական կեանքի մէջ նշանակութիւն ստացած այլ և այլ ուսումների, դօքտրինների սկզբնապատճառ, իսկ մասամբ ուղղակի հիմք է ծառայած։

Ձեզ ամենքին յայտնի է, տիկիններ և պարոններ, որ երբ մէկը մի սեպհականատէրից մշակութեան համար իջարով, կապալով հող է վերցնում, այդ կապալառուն հողի սեպհականատիրոջ առհասարակ փող է վճարում և կամ վերջապէս մի վարձատրութիւն է տալիս։ Հասարակաց լեզուի մէջ այդ վարձատրութեան կապալադրամ և կամ, որպէս այդ բոլոր եւրոպական լեզուներում ընդունուած է, ռենտ են անուանում։ Երբ ասում են, թէ այս ինչ հողը հարիւր ռուբլի ռենտ է տալիս, այդ նշանակում է, թէ այդ հողի սեպհականատէրը ստանում է հարիւր ռուբլի և կամ հարիւր ռուբլու չափ բերքեր այն մարդուց, որը ստացել է իրաւունք այդ հողը իւր սեպհական օգտի համար մշակելու։

Այդպէս է հասկացվում ռենտ բառը հասարակաց լեզուի մէջ. բայց այդպէս չէ հասկացվում նա քաղաքատնտեսութեան մէջ Ռիկարդօից սկսած։ Եւ յիրաւի, եթէ քննենք, թէ ինչու մի կապալառու հողի սեպհականատիրոջ, օրինակի համար ասած, հարիւր ռուբլի է վճարում, մենք կ'տեսնենք, որ այդ հարիւր ռուբլին չէ գը-

նում լիապէս սեպհականատիրոջ դուտ օգտին. չէ թէ սեպհականատէրը ինքը գնել է այդ հողը, ուրեմն փող է վճարել և այդ փողը, երկրի սովորութեան համեմատ, տոկոս պիտի բերէ. չէ թէ մի հող մշակութեան ընդունակ դրութեան մէջ պահելու, ուրեմն և կապալով տալու համար հարկաւոր է, որ սեպհականատէրը այլ և այլ, բոլոր կալուածատէրերին անկասկած յայտնի ծախքեր անէ և կամ անձնապէս հոկէ, աշխատէ, պարապուէ նորանով: Արդ, այդ բոլորը վարձատրութիւն է պահանջում և այն հարիւր ռուբլու մէջ, որը ստանում է հողի սեպհականատէրը, հաշուած է սորա արած ծախքերի տոկոսը և ջանքի վարձատրութիւնը: Բայց արդեօք կարող է սեպհականատէրը աւելի ստանալ քան այդ? Բիկարդօն ցոյց տուեց, որ այն հարիւր ռուբլու մէջ, բացի աշխատանքի և գործադրած գումարների տոկոսը, կայ մի այլ բան, որին միայն ռենտա կարելի է անուանել: Ռենտը, ըստ Բիկարդօի, ոչ փողի տոկոս է և ոչ աշխատանքի վարձատրութիւն և այդ պատճառով այն հարիւր ռուբլին դեռ ամբողջապէս հողային ռենտ չէ. ռենտը այդ գումարի միայն մի մասն է, մի մաս, որի մեծութիւնը ճշդութեամբ որոշել թէպէտ և շատ դժուար է, բայց որի գոյութիւնը կարելի է ապացուցել արդէն իմացականապէս, հիմնուելով մի քանի ամենքին յայտնի իրողութիւնների վերայ:

Տեսնենք, թէ ինչ է ուզում ասել Բիկարդօն:

Մենք բոլորեքեանքս գիտենք, տիկիններ և պարոններ, որ մի երկրի բնակիչների թիւը աճում է և այդ պատճառով մի յառաջադէմ երկրի ազգաբնակութիւնը, քանի գնում, այնքան աւելի խտանում է: Բայց և այն մի առանձին ապացոյցի կարօտ չէ, որ մի երկրի հողը իւր բոլոր մասերում նոյն բերրութիւնը չունէ. կան այսպէս

անուանած լաւ հողեր, որոնք առատ բերք են տալիս. կան և միջակ հողեր, վատ հողեր և այլն: Հողի աւելի մեծ բերրութիւնը կախուած լինի հողի մէջ գտնուած միներալական բաղադրութիւնների աւելի մեծ քանակութիւնից, թէ ջրի առատութիւնից և այլն, այդ մեր քննելու բան չէ. միայն թէ փաստ է, որ հողը մի երկրի զանազան տեղերում նոյնը չէ բերրութեան տեսակէտից. այնպէս որ, եթէ հետազոտելու լինենք մի ամբողջ երկիր, Կովկասը, Ռուսաստանը, Գերմանիան, Ֆրանսիան և այլն, մենք կարող ենք որոշել երկրի զանազան տեղերում ցրուած հողերի նկատմամբ բերրութեան զանազան աստիճաններ: Կ'լինեն հողեր, որոնք մօտ միևնոյն բերրութիւն կ'ունենան, թէպէտ և զանազան տեղերում ցրուած լինեն նոքա. բայց կարող է պատահել, որ երկրի մի մասում միայն լաւ հողեր են, մի այլ մասում՝ միայն միջակ, միւսում՝ միայն ստոր հողեր և այլն: Այսպէս կամ այնպէս, հողերը կարելի է դասաւորել ըստ բերրութեան աստիճանների և անուանել ամենագերազանց հողերին № 1, լաւ հողերին՝ № 2, միջակներին № 3, աւելի ստոր հողերին՝ № 4, վատ հողերին՝ № 5, և այլն:

Բայց արդեօք ինչով պէտք է չափել զանազան հողերի բերրութիւնը: Հասկանալի է, որ տնտեսական տեսակէտից նայած, մի հող աւելի բերրի պիտի համարուի մի այլ հողից, եթէ այդ երկու կտոր հողերի վրայ հաւասարաչափ ծախք, ջանք, աշխատանք արուին, բայց մէկը միւսից աւելի շատ բերք տայ, մէկը միւսից աւելի մեծ արժողութեան արդիւնք տայ: Այդ նոյնն է ասել, թէ աւելի ստոր հողը այն հողն է, որի վերայ աւելի շատ փող և աշխատանք պէտք է գործ դրուի, մի այլ՝ աւելի լաւ հողի չափ հաւասար արդիւնք ստանալու համար: Օրինակ, եթէ հարիւր փութ ցորեն ստանալու համար № 1 հողը,

որը ամենագերազանց հողն է, պահանջում է միայն յիսուն ռուբլի ամեն տեսակ ծախք, նորանից աւելի ստոր № 2 հողը, նոյն հարիւր փութ ցորենը տալու համար, կ'պահանջի աւելի ծախք, դիցուք յիսուն և հինգ ռուբլի. սորանից էս աւելի ստոր № 3 հողը՝ վաթսուն ռուբլի. № 4-ը՝ վաթսուն և հինգ ռուբլի, № 5-ը՝ եօթանասուն ռուբլի և այլն: Այնպէս որ, եթէ ամենագերազանց հողերը միայն մի մարդու սեպհականութիւն լինէին, № 2 հողերը մի այլ մարդու ձեռքում և այսպէս շարունակ և բոլորեքեանք միաժամանակ մշակէին իրենց հողերը, առաջինն կ'նստէր մի փութ ցորենը յիսուն կոպէկ, միւսին յիսուն և հինգ կոպէկ, երրորդին՝ վաթսուն, չորրորդին՝ վաթսուն և հինգ, հինգերորդին՝ եօթանասուն կոպէկ: Որքան մի հող աւելի ստոր աստիճանին է պատկանում, նոյնքան նորա արդիւնքը, աւելի լաւ հողի արդիւնքի նստուածքի հետ համեմատած, աւելի թանկ է նստում:

Արդ, ասում է Ռիկարդօն, քանի որ ազգաբնակութիւնը դեռ նուազ է մի երկրում, կարևորութիւն չէ զգացվում, ժողովուրդը կերակրելու համար, դիմել ստոր յատկութեան հողերին. ամեն մարդ աշխատում է հնարաւորին չափ մի արդիւնք արժանագոյն կերպով արտադրել և այդ պատճառով սկզբում մարդիկ դիմում են միայն գերազանց հողերին, որոնցից, որպէս վերը տեսանք, արդիւնքներ ամենից արժան կերպով կարելի է ստանալ, քան վատ հողերից: Իսկ երբ միայն մի յատկութեան գերազանց հողն է մշակվում ամենուրեք և այդ գերազանց հողերից ստացվում է մի փութ ցորեն, դիցուք, յիսուն կոպէկով, այդ ցորենը կարող է ծախուել երբէք ոչ նուազ, քան յիսուն կոպէկով, եթէ ցորեն ծախողների մէջ ամենամեծ մրցութիւն անգամ ենթադրենք: Ի հարկէ, մի ապրանք,

որը յիսուն կոպէկ միայն սեպհականատիրոջ է նստել, պէտք է ծախուի նստածից քիչ աւել, որպէս զի նա կարողանայ նաև օգտուել, իւր աշխատանքի համար վարձատրուել:

Սակայն, շարունակում է մտածել Ռիկարդօն, ժամանակով երկրի ազգաբնակութիւնը աճում է մինչև այն աստիճանի, որ մինչև այժմեայ մշակութեան մէջ գտնուած գերազանց հողերը այլ ևս բաւականութիւն չեն տալիս, այդ հողերից ստացած արդիւնքները չեն կարողանում բոլորին բաւականութիւն տալ: Կարօտութիւն է զգացվում մշակել, գերազանց հողերից զատ նաև աւելի ստոր, բայց բոլոր մնացածներից աւելի բարձր, ուրեմն, ըստ վերևի ենթադրութեան՝ № 2 հողերը: Այս հողերից ստացած ցորենը, որպէս վերը արդէն ենթադրեցինք, նստում է աւելի թանկ, քան գերազանց հողերից ստացած ցորենը, այն է փութը ոչ յիսուն, այլ յիսուն և հինգ կոպէկ:

Ահա այդ ժամանակներումն է, որ սկսում է բնաբ կոչուած բանը երևան գալ. և ում համար? գերազանց հողերի սեպհականատէրերի համար և ահա ինչպէս: Ցորենի գինը վաճառանոցում մնում է մի յայտնի ժամանակում. ցորենի տէրերը իրար հետ մրցելով, իջեցնում են ապրանքի գինը մինչ մի աստիճանի, որից պակաս ոչ ոք այլ ևս չի համաձայնուիլ նորան ծախել: Ում ապրանքը ամենից աժան է նստել, նա կարող է ամենից շատ իջեցնել, եթէ հարկը ստիպէ: Բայց արդեօք գերազանց հողերի տէրերը, որոնց ցորենը աւելի աժան է արտադրուել, քան № 2 հողերի տէրերի ցորենը, կարող են և կամ պատրաստ կ'լինեն ցորենի գինը իջեցնել մինչև յիսուն կոպէկ փութը? Այո, իսկապէս դատած, նոքա այդ կարող են անել, բայց եթէ նոքա այդ անեն, այն ժամանակ № 2 հողերի տէրերը ստիպուած պիտի լինեն իրենց ցորենի

գինը նմանապէս իջեցնել մինչ յիսուն կոպէկ. բայց որովհետև նոցա ցորենը իրենց աւելի թանկ է նստել, նոքա այդ չեն անիլ և այդ պատճառով վաճառանոցում ցորենի գինը կ'լինի ամենապակասը յիսուն և հինգ կոպէկ, մինչև անգամ նոցա համար, որոնց ցորենի փութը միայն յիսուն կոպէկ է նստել. մինչդեռ առաջ, երբ № 2 հողերը մշակելու կարօտութիւն չկար, ցորենի գինը ամենապակասը միայն յիսուն կոպէկ էր: Այդ հանգամանքից օգտուողները միայն գերազանց, այն է № 1 հողերի տէրերն են, որովհետև, առանց որ նոքա աւելի մսխէին և աշխատէին, քան առաջ, նոցա ցորենի գինը վաճառանոցում, ամենամեծ մրցութեան դէպքում անգամ, փութին հինգ կոպէկով աւելանում է. որքան և ցորենի գինը յիսուն և հինգ կոպէկից բարձրանայ, ուրեմն որքան և № 2 հողերի տէրերը օգուտ ստանան, գերազանց հողերի տէրերը նոցանից միշտ փութը հինգ կոպէկ աւելի կ'աշխատեն: Լինի այդ գինը վաթսուն կոպէկ, առաջնակարգ հողերի տէրերը կ'աշխատեն տասը կոպէկ, երկրորդակարգ հողերինը՝ հինգ կոպէկ միայն. լինի այդ գինը եօթանասուն կոպէկ, առաջինների օգուտը կ'լինի քսան, երկրորդներինը՝ տասն և հինգ կոպէկ, ուրեմն հինգ կոպէկի պտուղներին օգուտ չէ նոցա մէջ միշտ կ'լինի:

Այդ աւելի մեծ օգուտը, որը միայն աւելի գերազանց հողերի տէրերն են ստանում և որը գոյանում է այն զանազանութիւնից, որը կայ արդիւնքի նստուածքի մէջ — անուանում է Ռիկարդօն рента: Ռենտը ուրեմն ոչ փողի տոկոս է, ոչ աշխատանքի վարձատրութիւն, այլ մի առանձին օգուտ, որը գոյանում է զանազան տեսակ մշակուող հողերից լաւագոյնների տէրերի համար, երբ ազգաբնակութեան աճումը ստիպում է բնակիչներին դիմել աւելի ստոր դասակարգի հողերին:

Պարզ է, որ քանի բնակիչների թիւը աւելի ու աւելի աճէ, նոյնքան ստիպողական պիտի լինէ և աւելի ստոր № 3, յետոյ № 4, № 5 և այլ հողերին դիմել, նոյնքան աւելի պիտի ուրեմն լաւագոյն հողերի տէրերի համար ռենտը աւելանայ: Հարկաւորուեց № 3 հողերը մշակել, որոնցից ցորենի փութը կարող է ստացուել միայն վաթսուն կոպէկով, № 1 հողատէրերի համար ռենտը կը լինի տասը կոպէկ, իսկ № 2 հողատէրերի համար Ռենտ արդէն առաջին անգամ հինգ կոպէկի ռենտ գոյանայ: Հարկաւորուեց մշակել նաև № 4 հողերը, առաջիններները կ'ստանան ռենտ տասն և հինգ կոպէկ, երկրորդները՝ տասը, իսկ երրորդների համար առաջին անգամ կ'գոյանայ հինգ կոպէկի ռենտ. չորրորդները դեռ չեն ունենալ ռենտ, իսկ այդ ունենալու համար պէտք է սպասեն, մինչև կ'սկսուեն մշակուել № 5 ստոր հողերը և այսպէս շարունակ:—

Ես կարծում եմ, տիկիններ և պարոններ, որ Ռիկարդօի ռենտի թէօրէի այն բացատրութիւնը, որը ես Ձեզ տուի, այնքան պարզ է, որ հազիւ մի որ և իցէ կէտի մէջ ես Ձեզ մթութեան մէջ թողած լինեմ: Ինքը Ռիկարդօն պարզաբանում է իւր ասածը հետևեալ օրինակով: Մի դեռ չվարած երկիր բնակեցվում է մի փոքրաթիւ գաղթականութիւնով: Քանի որ այստեղ դեռ աւելորդ կայ առաջի կարգի հողերից, և ամենքը կարող են նոցանից ձրի մի կտոր ձեռք բերել, արդէն ռենտած հողերի համար ոչ մի ռենտ կարող չէ գոյութիւն ունենալ: Բայց երբ առաջի յատկութեան հողերը բոլորովին վարած, մշակուած են և նոքա մի յայտնի կապիտալի օգնու-

թեամբ տալիս են ակրը 5 քուարտեր *). իսկ միւս կողմից, երբ աճող ազգաբնակութիւնը ստիպում է երկրորդ կարգի հողերը մշակել, որոնք նոյն կապիտալով միայն 4 քուարտեր են տալիս՝ այն ժամանակ գոյանում է առաջի կարգի հողերի մի ակրի համար տարեկան մէկ քուարտերի բենտ: Որովհետև այժմ 4 քուարտերի գինը բաւականաչափ բարձր է մի ակրի համար արած արտադրութեան ծախքերը ծածկելու համար, և մի երկրագործի համար պիտի միևնոյնը լինի, թէ նա առաջի հողի վրայ, որպէս կապալառու, 5 քուարտեր ստանայ և մի քուարտեր յետ տայ, թէ երկրորդ հողի վրայ, որպէս սեպհականատէր, հենց ի սկզբանէ միայն 4 քուարտեր հնձէ: Աճում է ազգաբնակութիւնը և առաւել, այնպէս որ երկրորդ կարգի, ուրեմն արկրը միայն 3 քուարտեր տուող հողերը պիտի մշակուեն,—ցորենի գինը կրկին բարձրանում է, որովհետև այժմ արդէն 3 քուարտերը պէտք է ծածկեն արտադրութեան ծախքերը: Այդպիսով առաջնակարգ հողերը կ'տան 2 քուարտերի բենտ, երկրորդ կարգի հողերը՝ 1 քուարտեր և այլն:

Այդ է այսպէս կոչուած Ռիկարդոի բենտի թէորէն. և դուք արդէն նկատած կ'լինէք, տիկիններ և պարոններ, որ Ռիկարդոն ուզեցել է այդ թէորէով մի հանգամանք բացատրել, որը գոյութիւն ունէ կեանքի մէջ, բայց որը ի հարկէ, այնպէս պարզ կերպով գուցէ ոչ մի երկրում գոյութիւն չէ ունեցած, որպէս այդ նա է ենթադրում:

*) Ակրը անգլիական չափս է տարածութեան. մի ակրը հաւասար է ռուսաց դեսեատինի 0. 37 մասին, ուրեմն դեսեատինի մի երրորդից մի փոքր աւելի: Քուարտերը մանաւանդ ցորենի չափս է և հաւասար է 290½ լիտրի կամ ռուսաց 11 չետվերիկի (իսկապէս 11. 09 չետվերիկ):

Օրինակ, շատ դժուար է թոյլ տալ, որ մի երկրում մշակուող հողերը սկզբում միմիայն գերազանց հողերը լինեն, յետոյ նաև հետևեալ լաւ հողերը և այլն, թէպէտ և մի և նոյն ժամանակ անկասկած է, որ ամենայն ժամանակ մարդիկ ձգտում ունեն ձեռք բերել որքան կարելի է լաւ հողեր: Միւս կողմից, հողերը դասակարգերի բաժանել այն եղանակով, ինչպէս Ռիկարդոն է անում, անշուշտ սխալ է շատ դէպքերում: Չատ թէ քիչ ճշտութեամբ հողերը կարելի է ըստ բերրութեան դասակարգերի բաժանել միայն մի յայտնի ժամանակի նկատմամբ. չէ թէ լաւն ու վատը այստեղ որոշվում են, նայած որ հողից ամենաաժան գընով արդիւնք է ստացվում. արդ, կան հողեր, որոնք այս կամ այն պատճառով, օրինակ ջրի պակասութիւնից այսօր ամենաէին արդիւնք չեն տալիս, ուրեմն նոքա պիտի պատկանեն ամենաստոր կարգին. մի ջրանցք շինելուց յետ, այդ հողերը կարող են ամենաբերրի հողեր դառնալ: Արդ, Ռիկարդոի մտքին համեմատ, ջրանցք անցկացնել կը նշանակէ ծախք անել, ուրեմն ցորենի գինը թանկացնել. իսկ եթէ այդ ջրանցքի ծախքը աննշան լինի հողի մեծութեան և ուրեմն ստանալու արդիւնքի համար? և եթէ այդ հողերը, նոյն իսկ ջրանցքի ծախքերի հետ միասին, աւելի աժան բերք տան, քան մինչ այն ժամանակ մշակուող եթէ ոչ № 1 գոնէ № 2, № 3 հողերը? Ես արդեն չեն խօսում այն իրապէս միշտ կատարուող բանի վերայ, որ յայտնի և մեծ տարածութեամբ հողեր անբերրի կամ գոնէ տնտեսապէս անձեռնտու են համարվում միայն հեռաւորութեան պատճառով կենտրօնական տեղերից և կամ վատ ճանապարհների պատճառով. այնպէս որ, երբ ճանապարհը գտնվում է և կամ շինվում, այնտեղերից եկած բերքերի առատութիւնը դադարեցնել է տալիս կենտրօնական տեղերի մօտ գտանուած այն հողերի մշակու-

թիւնը, որոնք մինչև այն ժամանակ լաւ և միջակ հողեր էին համարվում և այդ պատճառով առաջնակարգ հողերի համար գոյացած ռենտը կամ պակասում է և կամ կրկին ոչնչանում մինչ ազգաբնակութեան նոր աճելը, որը կրկին կ'ազդէ բերքերի գների վրայ և ռենտ կ'գոյացնէ: Ձոգենաւերը և երկաթուղիները այդ տեսակ հետևանք ունեցան եւրոպական ազգերի համար, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներից ամենաաժան կերպով ցորեն հասցնելով Եւրոպայի մի քանի երկիրներ, մանաւանդ Անգլիա և Ֆրանսիա: Եւ եթէ երկաթուղիներ Ռիկարդոի ժամանակ դեռ չկային, լաւ ճանապարհների գաղափարը գոնէ նոր չէր:

Բայց արդեօք այդ բոլոր հանգամանքները, որոնց Ռիկարդոն անտես է առնում, ոչնչացնում են նորա ռենտի թէորէն? Ոչ երբէք, այդ բոլորը ցոյց է տալիս միայն, որ Ռիկարդոից գտած և նորանից առաջին անգամ գիտնականապէս հետազօտած ռենտը այն պարզ ու շարունակ կերպով չէ բարձրանում, ինչպէս այդ կարելի էր նորա թէորէից եզրակացնել. այլ թէ այդ ռենտը ենթարկվում է այլ և այլ փոփոխումների, նայած թէ ազգաբնակութեան աճման դիմաց ինչ նոր ֆակտորներ են հանդէս ելնում նորա ազդեցութիւնը ամոքելու և կամ չեզոքացնելու համար: Մի մոռացէք և այն, տիկիններ և պարոններ, որ այն տեսակ գիւտեր, որոնք, որպէս շոգին և երկաթուղիները, կարող են առժամանակ մրցել այլ երեւոյթների բնական ընթացքի դէմ, որպիսիներից է ազգաբնակութեան աճումը, սակաւ են հնարվում. իսկ մի անգամ հնարուած, գտած և գործի դրած, նոքա փոխում են հասարակաց յարաբերութիւնները միայն առժամանակ:

Ռիկարդոի թէորէն մեզ բացատրում է շատ նշանաւոր հասարակաց երեւոյթներ: Ռենտը մի օգուտ լինելով հողի սեպհականատիրոջ համար, մի օգուտ, որը ստացվում է ոչ թէ աշխատանքով, այլ միայն նպաստաւոր հանգամանքների պատճառով, հասկանալի է, որ ռենտը չի կարող գոյանալ մի ազգի դեռ ստոր աստիճանի առաջադիմութեան ժամանակ: Որքան հողի պակասութիւն է զգացվում, նոյնքան բերքերը թանկ են, նոյնքան և ռենտը բարձր է լաւ հողերի տէրերի համար. իսկ հողի պակասութիւն զգացվում է միայն երբ ազգաբնակութիւնը մի երկրում խտանում է. իսկ ազգաբնակութեան խտութեան աստիճանը, որպէս նախորդ դասախօսութեան մէջ տեսանք, աճումից է կախուած, աճում, որը այնքան հաւասարաչափ և շարունակ ու անընդհատ է լինում, որքան մի երկրում քաղաքակրթութիւնը բարձր է:

Ռենտը կարող է գոյանալ միայն, երբ հողերը անհատական սեփհականութիւն են կազմում, և ռենտը միայն սեպհականատիրոջն է պատկանում: Դորա մէջ դժուար չէ համոզուել: Մի երկիր ունէ ընդամենը, դիցուք, 100 դեսեատին հող, որոնցից յիսուն դեսեատին, հարիւր ռուբլի ծախքով, տալիս են 200 փութ ցորեն, միւս յիսուն դեսեատինը, նմանապէս հարիւր ռուբլի ծախքով, տալիս են միայն 150 փութ: Եթէ առաջի յիսունը մի մարդու սեփհականութիւն է, միւս յիսուն դեսեատինը՝ մի այլ մարդու սեպհականութիւն, այն ժամանակ առաջի հողատիրոջ կ'նստի փութը 50 կոպէկ, միւս հողատիրոջ՝ 66 կոպէկ և որովհետև ցորենի գինը որոշվում է աւելի ստոր հողերից ստացած ցորենի նստուածքով (աւելցնելով դորա վերայ ի հարկէ և երկրի սովորական փողի տոկոսը և վարձատրութիւնը, որը պարզութեան համար մենք անտես ենք առնում, քանի որ այդ վարձատրութիւնը երկու հո-

ղատէրերի համար էս նոյնն է), ուստի առաջի հողատէրը կ'ստանայ 16 կոպէկ րենտ ամեն փութից և կամ 32 ռուբլի իւր չիտուն դեսեատինի համար։ Ենթադրեցէք այժմ, որ այն 100 դեսեատին հողը երկու մարդու չեն պատկանում, այլ միայն մի անձի (կամ տէրութեան, կամ մի համայնքին). այդ դէպքում մի փութ ցորենի նստուածքը կ'լինի ոչ թէ 66 կոպէկ, այլ միայն 200 ռուբլի բաժանած 350-ի վերայ (200 փութ և 150 փութ), որ կ'ունէ մօտ 57 կոպէկ։ Հաշուելով այն, ինչ ցորենատէրը պիտի ստանայ, որպէս իւր գործադրած կապիտալի, գումարի տոկոս և իւր աշխատանքի վարձատրութիւն, առաջի դէպքում ցորենի գինը կ'լինէր, որպէս տեսանք, 66 կոպէկ, որի պատճառով լաւագոյն հողի տէրը կ'ստանար փութին 16 կոպէկ րենտ, իսկ երկրորդ դէպքում, բոլոր հողը մէկին պատկանելով և ցորենի գինը որոշուելով ընդհանուր նստուածքի համեմատ, ցորենի մի փութի գինը կ'լինէր միայն 57 կոպէկ և այդ սեպհականատէրը չէր ստանայ ոչ մի րենտ, այս բառի վերը բացատրած նշանակութեամբ։ Ահա ինչու ես ասացի վերը, որ րենտը կարող է գոյանալ միայն, երբ մի երկրի հողերը, որպէս այժմ ամբողջ Եւրոպայում, անհատական ձեռքերի մէջ են։ Ահա ինչու րենտը հողային սեպհականութեան հարց է, ահա ինչու նա, նոյն իսկ այդ պատճառով, հասարակական հարց է։

Մի ազգի կեանքի սկզբնական շրջաններում, եթէ հողը անհատական սեպհականութիւն էլ լինի, րենտ չէ լինում, որովհետև բնակիչների նուազ խտութեան պատճառով, բոլոր երկրորդակարգ և երրորդակարգ հողերը դեռ անմշակ դրութեան մէջ են լինում։ Ռենտը գոյանում է միայն ուշ, մի ազգի արդէն զարգացած դարերշրջաններում։ Ահա ինչու նոյն իսկ այն ժամանակներում, որպէս

այժմ մանաւանդ եւրոպական ամենաքաղաքակիրթ երկիրներում, երբ և ուր պէտք էր կարծել, թէ կեանքի, գոյութեան համար կռիւը ամենից սաստիկ պիտի լինի, ուր ամեն բան միայն աշխատանքով պիտի որ ձեռք բերուէր, նոյն իսկ այդ դարերում և երկիրներում հողատէրերից շատերը, րենտի գոյութեան պատճառով, կարողանում են առանց աշխատանքի օգուտ ստանալ, իրենց հողերը ուրիշներին կապալով տալով։

Առածս պարզելու համար, բերեմ մի օրինակ։ Ահա ձեզ մի երկիր, որտեղ, պարզութեան համար ասենք, միայն երեք տեսակի հողեր կան՝ առաջին, երկրորդ և երրորդ կարգի և բոլորն էլ մշակվում են։ Երրորդ կարգը տալիս է ցորեն 80 կոպէկով, երկրորդը 60, երրորդը 50 կոպէկով։ Երկրի սովորական աշխատանքի վարձատրութիւնը ենթադրենք 10 պրոցենտ. նշանակում է, թէ 80 կոպէկ, այսինքն ամենաթանկ նստած ցորենի ծախու գինը կ'լինի 88 կոպէկ։ Այժմ հարցվում է, թէ արդեօք այդ երրորդ կարգի հողերի տէրերը կարող են նոցա կապալով տալ այն դիտմամբ, որ իրանք էս շահուեն ? Ոչ. որովհետև այդ հողերից ստացած սովորական օգուտը միայն 10% լինելով, այդ վաստակը հազիւ կարող է կապալառուին բաւականացնել։ Կապալառուն պէտք է սովորական օգուտից զրկուի, եթէ իւր օգուտից սեպհականատիրոջ էս մաս տայ։ Ստոր հողերի տէրերը ուրեմն իրենց հողերը կապալով չեն տայ, այլ իրանք կ'աշխատեն իրենց հողերի վերայ և նոցանից 10% օգուտ կ'ստանան։ Այլ է հանգամանքը երկրորդ և առաջին կարգի հողատէրերի համար։ Վատ հողերը որոշում են ցորենի գինը, ուրեմն բոլորի համար էլ ցորենի ծախու գինը 88 կոպէկ է։ Երկրորդներին նստում է ցորենը միայն 60 կոպէկ, նշանակում է նոքա կ'ունենան զուտ օգուտ 28 կոպէկ, եթէ

իրանք իրենց հողերը մշակեն։ Բայց այդպիսի հողատէրերը շատ լաւ կարող են դիմել մի կապալառուին և ասել նորան. մշակիր, վարիր իմ հողը. ցորենի փուԹը քեզ կ'նստի 60 կոպէկ, իսկ կ'ծախես 88 կոպէկով. այդ օգուտից 10%, ուրեմն 8 կոպէկ քեզ, 20 կոպէկ ինձ, որպէս րենտ։ Ինչ ասել կ'ուզէ, որ առաջնակարգ հողերի տէրերը էս առաւել կարող են իրենց հողերը կապալով տալ և միայն րենտով ապրել։

Բայց արդեօք մի և նոյն երկրում մշակվող հողերի յատկուԹիւնները այն աստիճանի իրարից տարբեր են, որ կարողանան մեծ րենտ զոյացնել լաւագոյն հողերի տէրերի համար։ Պատասխանը մենք կարող ենք գտնել միայն այն հետազոտուԹիւնների մէջ, որոնք արուած են այս դարուայ ընԹացքում այլ և այլ երկիրներում հողերի յատկուԹիւնները որոշելու համար։ Այդ տեսակ հետազոտուԹիւններ արուած են Եւրոպայի զանազան երկիրներում, որպէս զի ըստ այնմ հողերի վերայ նոցա բերրուԹեան համեմատ հարկեր դնուեն։ Այդ հետազոտուԹիւններից ես կ'հաղորդեմ ձեզ միայն մի քանի ընդհանուր եզրակացուԹիւններ մեզնից այժմ քննուող հարցի մասին մի գաղափար տալու համար։ Ֆոն Ֆլոտով, իւր մի գրուածքի մէջ, տպած 1820 Թուին, ընդունում է մի շեֆֆել *) ցորենի մէջ, տպած նստուածքը, այսինքը նորա արտադրելու համար արած միսխը, առաջի կարգի հողերի համար հազիւ մի և կէս Թալեր, ռուսաց փողով ուրեմն համարեա ուղիղ մէկ և կէս ռուբլի արծաԹ, իսկ տասներորդ կարգի հողերի համար՝ 3 ռուբլի արծաԹ։ Մարկարդի ասելով, Հանովերի նախկին ԹագաւորուԹեան մէջ բոլոր վարելահողերի և այգիների

*) Շեֆֆել գերմանական չափս է և հաւասար է 50 լիտրի։

հողերի 60 պրոցենտը բերում են ցանածից միայն 2-ից մինչ 4 անգամ աւելին, 35 պրոցենտը 5—8 անգամ աւելի, $4^1/_2$ պրոցենտը այն հողերի բերում են ցանքից 9 մինչ 12 անգամ աւելի։—Պրուսիայում 1862 Թուականին նշանակուած էր մի մասնաժողով հողերի զուտ արդիւնքները որոշելու համար։ Այդ մասնաժողովից ընդունուած Թուանշանների համեմատ վարելահողերի զուտ արդիւնքների արժողուԹիւնը տարբերվում է 3-ից մինչ 420 զիլբերգրոշ մի մօրգեն հողի համար, մարգագետինների նկատմամբ՝ 6-ից մինչ 420, արօտատեղերի նկատմամբ՝ 1-ից մինչ 360։—Անգլիայում 1821 Թուի պարլամենտական հետազօտուԹիւններից յայտնի եղաւ, որ ամենալաւ հողերը տալիս էին 32—40, ամենավատերը՝ միայն 8—12 բուշել *) ցորեն մի ակր հողի վրայ։

Այդ մի քանի Թուերով Դուք կարող էք, տիկիններ և պարոններ, համոզուել, որ մշակուող հողերի յատկուԹիւնները միևնոյն երկրում բաւականաչափ իրարից տարբեր են, որպէս զի լաւ հողերի տէրերի համար րենտը նշանաւոր կարողանայ լինել։ Ի հարկէ, մեր վերը բերած Թուանշաններից մեծագոյն մասը այնպիսիք են, որ նոցանից դժուար է րենտի մեծուԹիւնը որոշել։ Օրինակ, մենք իմացանք այս րոպէին, որ Անգլիայում 1821 Թուին ամենալաւ հողերը հինգ անգամ աւելի էին տալիս, քան ամենավատ հողերը. այդ կ'նշանակէ, Թէ, ցորենի գինը միևնոյնը լինելով, միջոցեա ամենալաւ հողերից ստացվում էր 100 ռուբլու արդիւնք, ամենավատերից ստացվում էր միայն 20 ռուբլու արդիւնք։ ՄիԹէ դորանից իսկոյն պէտք է եզրակացնել, Թէ առաջինների սեպհականատէ-

*) Բուշել հաւասար է մի քուարտերի 8-երորդ մասին, որ կ'անէ $36^1/_4$ լիտրից քիչ աւելի։

ըերը 70—80% շահվում էին իրենց հողերից ? Այդ այն-ժամանակ միայն կարող էր լինել, եթէ երկուսի միսիը միևնոյնը եղած լինէր և մէկը դորա փոխարէն ստանար 100, միւսը 20։ Բայց մենք դեռ ներքև կ'տեսնենք, որ ռենտ տուող հողերը պահանջում են մշակութեան համար աւելի մեծ միսիս, աւելի մեծ կապիտալ և որ կապիտալը միայն մի յայտնի աստիճանի կարող է հողի արդիւնքը իրան համեմատ աւելացնել, այնպէս որ այդ աստիճանից վեր՝ կապիտալի ոյժը նուազում է աստիճանաբար. այնպէս որ, եթէ, օրինակի համար, հողի սեպհականատէրը առաջ 100 ռուբլի էր մսխում և հողից 50 պրոցենտ զուտ օգուտ ստանում, կրկնապատկելով մսխած գումարը, թէպէտ և հում արդիւնքը աւելանում է, բայց նորա զուտ արդիւնքը իջնում է 50-ից դէպի 40% և այլն։

Դորա մասին, ինչպէս ասացի, ներքև կ'խօսենք, իսկ այժմ անցնենք այն բանակռուին, որի առարկայ եղաւ երկար ժամանակ Ռիկարդօի ռենտի թէօրէն՝ բանակռուին, որի դրդող հանգամանքները կրկին և կրկին արդարացնում են նոցա, որոնք գտնում են հասարակական նախապաշարմունքների և հասարակական դասակարգերի մէջ իշխող դասային էգօիզմի, դասային եսականութեան մէջ ամենագլխաւոր պատճառներից մէկը, թէ ինչու հասարակական գիտութիւնները աւելի դանդաղ քայլերով են առաջանում, քան բնական գիտութիւնները։ Բնական է, որ հասարակաց գիտութիւնները, որոնց շարքից մանաւանդ քաղաքատնտեսութիւնը իրենց հետազօտութեան առարկան ունենալով հասարակական կեանքը, յաճախ ստիպուած են լինում շոշափել այս կամ այն դասակարգի զուցէ և իրաւացի շահերը։

Ռիկարդօի վերայ յարձակուեցին նախ, պնդելով, որ նա իւր թէօրէով գրգիռ է յարուցանում հողատէրերի

դէմ։ Եւ երևակայեցէք, որ այդպիսի մի մեղադրանք ուզում էին բարդել նորա վերայ Անգլիայում, ուր աւելի, քան մի որ և է այլ եւրոպական երկրում, հողատիրութեան հետ կապուած էին, որպէս և են այժմ, քաղաքական մեծ իրաւունքներ։ Այդ քաղաքական հայեացակէտից էր, որ գրվում էին յօդուածներ Ռիկարդօի ռենտի թէօրէի դէմ Լօնդօնի նշանաւոր տօրիական օրգան Quartelly Review ամսագրի մէջ։ Կան առարկութիւններ արած Ռիկարդօի դէմ նաև շատ նշանաւոր գրողներից, որպիսիք են Ժան-Բատիստ Սէյ, Սիսմոնդի և այլք. բայց նոցա հակառութիւնները մասամբ ծնած են Ռիկարդօին լաւ ըմբռնած չլինելուց, իսկ մասամբ նոքա պարունակում են միայն մեղմութիւններ այն մտքերի, որոնք Ռիկարդօի մօտ աւելի բացարձակ, աւելի սուր կերպով են արտայայտուած։

Բայց այն քաղաքատնտեսը, որի անունը անբաժան կերպով կապուած է Ռիկարդօի դէմ յարուցած պոլեմիկի հետ, այդ՝ Ամերիկայի ամենանշանաւոր քաղաքատնտես Կարէյն է (Caray-արտասանվում է Քեռի)։ Կարէյի յարձակումները Ռիկարդօի ռենտի թէօրէի դէմ, սակայն, չէին իշխուած քաղաքական կուսակցութիւնների առանձնական շահերի հոգսերով, որպէս այդ տեսանք Ռիկարդօի անգլիական ժամանակակից հակառակորդների մօտ։ Ոչ, Կարէյը, ամերիկացի զոլով, նոյն զգացմունքները չէր կարող ունենալ, ինչ ունէր անգլիական արիստոկրատական կալուածատէր դասը։ Բացի դորանից, Կարէյ ասպարէզ ելաւ միայն քառասնական թուերի վերջերքում և չիսունական թուերում, երբ քաղաքատնտեսական գրականութիւնը գրեթէ ամբողջապէս նուիրուած էր միջազգային առևտուրի քաղաքականութեան մէջ հետևելու սիստեմ-

ների քննադատութեան։ Պէտք է թողնել, որ մի երկրից միւս երկիր ապրանք ուղարկուի առանց մաքսի և կամ գոնէ առանց ապրանքների գները զգալի կերպով թանկացնող մաքսերի, թէ ընդհակառակը, հարկաւոր է նոցա համար ծանր մաքսեր նշանակել, որպէս զի օտար երկիրներից առանց մաքսի բերած ապրանքների ժամանութիւնը չկործանի Հայրենի երկրի այն գործարանները, որոնք նոյն տեսակ ապրանքներ արտադրում են, միայն թէ աւելի թանկ գնով,—այդ հարցերն են, որոնք զբաղեցնում էին այն ժամանակ քաղաքատնտեսներին և քաղաքական շրջաններին գրեթէ ամբողջ Եւրոպայում և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում։ Կարէյ պաշտպանում էր երկրորդ սիստեմը, որը ընդհանրապէս կոչվում է հովանաւորող սիստեմ և որպէս հովանաւորական, որպէս պրոտեկցիոնիստ նա հակառակ էր Ռիկարդօի ռենտի թէորէին։ Այստեղ տեղը չէ նորա վերայ խօսել, թէ ինչ կապ կայ Ռիկարդօի ռենտի թէորէի և առևտրի հովանաւորական սիստեմի մէջ, որովհետև այդպիսով մենք կ'շեղուէինք մեր այսօրուայ դասախօսութեան առարկայից։ Զբաղուենք ուրեմն միայն այն առարկութիւններով, որ բերում է Կարէյ Ռիկարդօի դէմ սորա թէորէն իբր թէ անհիմն ցոյց տալու համար։

Որպէս Դուք յիշում կ'լինէք, տիկիններ և պարոններ, Ռիկարդօն ասում էր, թէ մշակութիւնը սկսվում է լաւ հողերից և յետոյ միայն տարածվում երկրորդակարգ և երրորդակարգ, մի խօսքով վատ հողերի վերայ։ Կարէյ պնդում է, որ, ընդհակառակը, մի երկրում մշակութիւնը միշտ սկսվում է և սկսուել է վատ հողերից և յետոյ միայն տարածուել աւելի բերրի հողերի վերայ։ Կարէյ ապացուցանում է իւր ասածը նախ տեսականապէս, ասելով, որ

բերրի հողերը ճահճային հողերն են և դետերի ափունքները, որոնք սկզբնապէս անտառաբոյս են լինում։ Արդ, ասում է նա, ճահիճները չորացնելու և անտառները յարդելու և նոցա մշակութեան յարմարեցնելու համար հարկաւոր է երկար աշխատանք և կապիտալ։ Բացի նորանից, որ այդտեսակ տեղերը բնակութեան համար անառողջ են, մի նոր երկրում գաղթականութիւն հաստատողները սկսում են մշակութիւնը միշտ բարձր դիրք ունեցող տեղերում և թեթև հողերի վերայ և որքան ազգաբնակութիւնը և հարստութիւնը աւելանում են, նոյնքան էլ տարածվում է մշակութիւնը բարձրութիւնների ստորոտների երկայնութեամբ, որոնք նուազ ստ նուազ անտառներից մերկանում են և յետոյ միայն կարելի է լինում անցնել ամենաբերրի հողերի վերայ, որոնք երկրի ցածրութիւնների վրայ են գտանվում։

Այդ նկատողութիւնը Կարէյ արաւ դեռ 1848 թուին իւր մի գրուածքի մէջ «Անցեալը, Ներկան և Ապագան» վերնագրով։ Նոյն մտքերը, սոցանից դուրս բերած բոլոր հետևանքներով, ի նպաստ հովանաւորականին և ընդդէմ միջազգային առևտրի ազատութեան սկզբմունքի, ամենաընդարձակ կերպով պարզեց Կարէյ իւր ամենամեծ շարադրութեան մէջ, որը կրում է «Հասարակական գիտութեան սկզբմունքները» վերնագիրը, հրատարակած 1858 թուին։

Բայց արդեօք որքան մեծ արժէք ունէ Կարէյի առարկութիւնը և հերքվում է սորանով Ռիկարդօի ռենտի թէորէն ? Կարէյ, յայտնելով իւր միտքը մշակութեան աստիճանաբար տարածուելու մասին վատ հողերից դէպի լաւագոյն հողերը, ի նկատի ունէր իւր Հայրենիքը՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, որը մի անմշակ երկիր էր, երբ եւրոպացի գաղթականները այնտեղ բնա-

կութիւն հաստատեցին։ Եթէ միայն Կարէյի դիտողութիւնները ճիշտ են այդ երկրի վերաբերեալ, նորա թէորէն անշուշտ առանց նշանակութեան չպիտի լինի արդէն այն պատճառով, որ բոլոր այժմեայ ազգերը գաղթականութիւններ են եղել նոցա այժմեայ բնակած երկիրների համար։ Այժմեայ անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, սլաւոն և այլ ազգեր իրենց այժմեայ հայրենիքների սկզբնական ազգերը չեն, այլ նոքա գրաւել են այդ երկիրները համեմատապէս միայն մօտ ժամանակներում։ Եւ միթէ մենք հայերս մի այլ երկրի գաղթականներ չենք հայերի մեծամասնութեան այժմեայ հայրենիքում—Հայաստանում - աւելի քան երեք—չորս հազար տարիներէ իվեր հաստատուած ? Իսկ եթէ այդ այդպէս է, Կարէյի թէորէն, որ աստիճանի նա միայն ճիշտ է, իհարկէ, ազգերի պատմական կեանքի սկզբնական դարերի իմաստասիրութեան օժանդակիչ մի թէորէ պիտի համարուի։ Շատ կարելի է ուրեմն, որ Ռիկարդօն այդ կէտում սխալուած լինի, շատ կարելի է, ասում եմ, որ Կարէյ իրաւունք ունէ Ռիկարդօի դէմ, ասելով, թէ մի նոր ոտք կոխուած, ուրեմն մշակութիւնից զուրկ մի կոյս երկրում գաղթականները, կապիտալների կատարեալ բացակայութեան պատճառով, գրաւում են նախ երկրի բարձրութիւնները և յետոյ միայն աւելի բերրի հողերը, երկրի ցածրութիւնները, գետերի անտառազարդ հովիտները և այլն։ Բայց եթէ այդ իսկ էլ լինի, այդ ցոյց կ'տայ միայն մի բան. այն է, թէ Ռիկարդօի բենտի թէորէն չէ վերաբերում մարդկային ցեղի որպէս նաև մի ազգի զարգացման սկզբնական դարերին. բայց այդ կ'նշանակէր ոչինչ դիտած չլինել, մտածել, թէ Կարէյի խօսքերը կարող են վերաբերել քաղաքակրթութեան մէջ արդէն յառաջացած ազգերի և կամ նոցա բնակած երկիրների մշակութեան դրութեան։ Կարէյ, ասում

է մի նշանաւոր քաղաքատնտես, հազիւ թէ պնդել ուզենայ, որ մի որ և իցէ հին երկրում—Անգլիայում կամ Ֆրանսիայում, օրինակ,—այն հողերը, որոնք այժմ անմշակ են թողած և կամ այս վերջին դարերում անմշակ էին մնացած, աւելի բերրի են, քան մշակուածները. և մի՞թէ ճշմարիտ է, որ Անգլիայում կամ Ֆրանսիայում մշակուած հողերը յարդութիւններից և ձորերից, իսկ մշակուածները բարձրութիւններից են բաղկացած։ Իւրաքանչիւր ոք գիտէ, շարունակում է նոյն հեղինակը,—Ջօն Ստիւարտ Միլը, — որ, ընդհակառակը, այդ բարձրութիւնները և թեթև հողերն են, որոնք բնութեանն են թողած և որ, եթէ ազգաբնակութեան աճումը պահանջում է մշակութեան աւելացնելը, այդ առաջ գնալը կատարվում է ցածրութիւններից դէպի բարձրութիւնները։ Մի անգամ մի դարուայ ընթացքում գուցէ պատահի չորացնել մի Բեդֆօր Լեւել և կամ ցամաքացնել մի Հարլեմի լիճ. սակայն դոքա աննշան և սակաւ բացառութիւններ են երկրի սովորական ընթացքի մէջ, և բոլոր հին երկիրներում, որոնք քաղաքակրթութեան մէջ առաջ են գնացած, դոցա նման քիչ բան է մնում շինել։

Կարէյ ինքը բերում է, առանց այդ զգալու, ամենամեծ վկայութիւնը ինքնաստ այն օրէնքի, որի դէմ նա մարտնչում է. որովհետև նա ինքը ամենաուժեղ կերպով աշխատում է այս իրողութիւնը ապացուցել, թէ յառաջադիմութեան մէջ գտնուող համայնքներում, երկիրներում՝ հողի արդիւնքների գները ձգտում ունեն բարձրանալու։ Բայց քաղաքատնտեսութեան մէջ այդ մի հաստատուած բան է, որ, ընդհանուր առմամբ, գները կարող են բարձրանալ միայն՝ երբ արտադրութեան նստուածքը, արտադրութեան ծախքերը բարձրանում են. եթէ Կարէյի թէորէն ճիշդ լինէր, եթէ իսկ լինէր, ասում ենք, որ հողի

մշակութեան ընդարձակուելը կատարվում է վատերից դէպի աւելի բերրի հողերը, հողի բերքերի արտադրութիւնը պէտք է, ընդհակառակը, միշտ աւելի ածան նստէր: Կարէին այստեղ ուրեմն ակնյայտնի կերպով իրան հակասում է:

Ներկայացնելով Ձեզ Բիկարդօի հողային ռենտի թէորէն, տիկիններ և պարոններ, ես աշխատեցի, գլխաւոր միտքը պարզելու համար, չբարդել հարցը, յիշելով ռենտի գոյանալու հետ միասին կատարուող մի այլ երևոյթ, որը, սակայն և շատ կարևոր է և առանձին բացատրութիւնների կարօտ: Ռենտը գոյանում է, որպէս Դուք գիտէք, միայն այն պատճառով, որ, ազգաբնակութեան աճումը ստիպում է մեզ երկրագործութիւնը ընդարձակել և նուազ առ նուազ երկրի մէջ գտնուած ստոր յատկութեան հողերը մշակութեան շրջանակի մէջ առնել: Բայց այստեղ մի նրբութիւն կայ դիտելու, որովհետև իրօք ազգաբնակութեան աճման ԱՆՄԵՋԻՆ ՀԵՊՔՆԸ այն չէ լինում, որ երկրագործութիւնը ընդարձակվում է աւելի ստոր հողերի վերայ և կամ գոնէ ոչ միշտ. և կամ, աւելի լաւն ասած, ազգաբնակութեան աճումը ոչ միայն ընդարձակել է տալիս երկրագործութիւնը, այլ դորա հետ միասին ազդում է երկրագործութեան, հողի մշակութեան եղանակների վերայ, առիթ տալով լաւագոյն հողերի տէրերին աւելի մեծ ջանքով, աւելի մեծ կապիտալով մշակել իրենց հողերը: Ես կ'ինդրեմ Ձեզ այդ միտքը լաւ ըմբռնել: Ասածս սա է. եթէ ես, մի ընդարձակ և լաւ հողի տէր լինելով, մինչ այժմ մսխում էի նորա վերայ տարեկան տասը հազար ռուբլի և ստանում էի դիցուք յիսուն հազար փութ ցորեն, քսան և հինգ տարուց յետ, երբ ազգաբնակութիւնը բաւականի կ'աճէ, երբ ուրեմն աւելի պահանջ կ'լինի ցորենի համար, ես այն ժամանակ շահաւէտ կ'գտնեմ նոյն հողի

վերայ փոխանակ 10,000 ռուբլու՝ 15,000 ռուբլի մսխել և դորա համեմատ հողիս արդիւնքը շատացնել, ստանալով ոչ թէ յիսուն, այլ դուցէ վաթսուն, եօթանասուն կամ հարիւր հազար փութ ցորեն: Ուրեմն արդէն ռենտաւոր հողերի աւելի լաւ մշակութիւնը կարող է բաւականութիւն տալ ազգաբնակութեան աճած պիտոյքներին, և հարկաւորութիւն չկայ, ազգաբնակութեան աճելուն պէս, խլոյն դիմել աւելի ստոր յատկութեան հողերին: Արդ, հարցը նորանումն է, թէ այդ ինչպէս է պատահում, որ բոլոր հին, յառաջացած և բազմամարդ երկիրներում, չը նայած վերը յիշած հանգամանքին, ստոր յատկութեան հողերը ռենտում են, մշակվում են:

Դորա պատճառը այն է, որ հողի արտադրական ոյժը մի սահման ունէ, որից դէն, կրկնապատկելով Ձեր ջանքը և կապիտալը, հողը Ձեզ երկու անգամ աւելի արդիւնք չի տալ, մինչև որ նոյն իսկ մշակութեան ամբողջ ԿԻՊԸ չփոխէք: Որոշել այդ սահմանը անկարելի է, բայց թէ նա կայ, նա գոյութիւն ունէ, այդ բոլորովին անկասկածելի է: Եւ այսպէս, մի հող, որի վերայ 1000 ռուբլի ծախք է անվում և 3000 փութ ցորեն է տալիս, կրկնապատիկ աւելի, ուրեմն 2000 ռուբլի ծախքով շատ կարելի է, որ տայ կրկնապատիկ աւելի արդիւնք, ուրեմն 6000 փութ և դուցէ մինչև անգամ աւելի: Փորձը բազմիցս անգամ ցոյց է տուել, որ այդ կարելի է և լինում է: Բայց եթէ մի անգամ, ծախքը կրկնապատկելով, կրկնակի արդիւնք կարելի է ստանալ, այդ դեռ չէ նշանակում, թէ մշակութեան ծախքը կրկին կրկնապատկելով և նորան 4000 ռուբլու հասցնելով, Դուք կ'ստանաք կրկնակի աւելի, ուրեմն 12,000 փութ, յետոյ 24,000, 48,000 փութ արդիւնք և այլն: Հողը այդ կէտում շատ է զանազանվում գործարաններից, ուր կապիտալը աւելի արդիւնաւոր է ցոյց տալիս իրան:

Կրկնապատկեցէք Ձեր գործադրած կապիտալը մի գործարանում և, աշխատելով նոյն սիստեմով, որպէս այժմ, Դուք կարող էք հաշուել, որ Ձեր արդիւնքը միշտ կ'կրկնապատկուի. իհարկէ, եթէ միայն Դուք այդ աւելցրած կապիտալով կ'ընդարձակէք գործարանը, աւելցնելով ջուլհակի հարիւր տորքի վրայ հարիւր նոր տորքեր, հարիւր մանելու իլիկների վրայ՝ հարիւր նոր իլիկներ և կամ եթէ թոյլ շարժուող մեքենաների տեղ Դուք կ'դնէք աւելի զօրեղ մեքենաներ և այլն: Ի հարկէ, հողի արդիւնաբերութիւնը միշտ կարելի է աւելցնել, բայց, ես կրկնում եմ, մի յայտնի սահմանից դուրս, հողի արդիւնքի աւելանալը աւելի քիչ չափով է կատարվում, քան ծախքերի աւելանալը: Խօսենք թուանշաններով, որովհետև դոցանով մենք մեր ասելիքը աւելի դիւրըմբռնելի կերպով արտայայտած կ'լինենք:

Վերցնենք, օրինակի համար, նոյն հողը, որը, 1000 ռուբլի ծախքով, 3000 փութ ցորեն էր տալիս և ենթադրենք ցորենի փութը 50 կոպէկ. նշանակում է, հողի արդիւնքի գինը 1500 ռուբլի լինելով, զուտ արդիւնք կ'լինի 500 ռուբլի: Կրկնապատկենք մսխելու զումարը և ենթադրենք, որ այս անգամ արդիւնքը ևս կրկնապատկուեց. մենք կ'մսխենք ուրեմն 2000 ռուբլի և կ'ստանանք 6000 փութ 3000 ռուբլու արժողութեամբ և կամ 1000 ռուբլու զուտ արդիւնք: Դիցուք այն սահմանը, որից դէն հողը այլևս կապիտալի համեմատ արդիւնք չէ տալիս, հենց այդտեղից է սկսում: Ինչ հետևանք է բղխում այդ հանգամանքից ? Այն, որ այսուհետև հողը կ'սկսի աւելի քիչ զուտ արդիւնք տալ: Մենք կրկնապատկում ենք մեր ծախքը՝ 4000 ռուբլի շինելով մեր գործադրած կապիտալը, բայց արդիւնքը, փոխանակ 12,000 փութ և կամ

6000 ռուբլի ներկայացնելու, ներկայացնում է միայն, դիցուք, 10,000 փութ և կամ 5000 ռուբլի. զուտ արդիւնք կ'ստացուի միայն 1000 ռուբլի, այսինքն նոյնքան, որքան մենք առաջ ոչ թէ չորս, այլ միայն երկու հազար ռուբլիով էինք ստանում: Մենք շարունակում ենք մեր գործադրելի կապիտալը աւելցնել և, փոխանակ 4000 ռուբլու, 8000 ռուբլի ենք մսխում նոյն հողի վերայ: Անցեալ անգամ արդիւնքը աւելացաւ փոխանակ երկու անգամի, միայն $1^3/_3$ անգամով, այժմ այդքանով էլ չէ աւելանում, այլ նա աւելանում է միայն $1^1/_5$ անգամով և ներկայացնում է միայն 12,000 փութ և կամ 6000 ռուբլի. այս հանգամանքում հողատէրը ոչ միայն զուտ օգուտ չէ ստանում, այլ, ընդհակառակը, նա երկու հազար ռուբլու վնաս է կրում: Այդ արդէն ամենադրական նշան է, որ հողատէրը մինչ ութ հազար ռուբլու ծախքի չի գնալ, այլ կ'մսխէ ամենաշատը 4000 ռուբլի, բաւականանալով տասը հազար փութ հում արդիւնքով, որը նորան, որպէս վերը տեսանք, կ'տայ հազար ռուբլի զուտ օգուտ:

Ներկայացնենք վերոյիշեալ թուանշանները մի ցուցակի մէջ. այն ատէն մենք կ'տեսնենք, որ՝

Ծախք	Հում արդիւնք	արժողութիւն	զուտ արդիւնք
1000 ռ.	3000 փ.	1500 ռ.	500 ռ.
2000 ռ.	6000 փ.	3000 ռ.	1000 ռ.
4000 ռ.	10000 փ.	5000 ռ.	1000 ռ.
8000 ռ.	12000 փ.	6000 ռ.	2000 ռ. վնաս:

Աւելի մեծ կապիտալով մենք, ուրեմն, միշտ կարող ենք հողի արդիւնքը աւելացնել, քանի որ այդ արդիւնքը մենք երեք հազարից տասներկու հազար դարձրինք, դա՝ հողի արդիւնքի աբսօլուտ մեծութիւնն է. բայց եթէ ստացած արդիւնքը համեմատելու լինենք արած ծախքերի հետ, մենք կ'տեսնենք, որ մսխած կապիտալը աւե-

լացաւ ութ անգամ, իսկ արդիւնքը՝ միայն չորս անգամ։ Հողի արդիւնքը ուրեմն համեմատապէս ոչ թէ աւելացաւ, այլ նուազեց։ Ահա ինչու ընդունուած է ասել, թէ հողի արդիւնքը գնալով նուազում է և ահա ինչ է հասկացվում քաղաքատնտեսութեան մէջ հողային արտադրութեան նուազման օրէնք խօսքով։

Ինչու հողի արտադրութիւնը կապիտալի համապատասխան չէ աւելանում, այդ բնագիտական հարց է, որովհետև կապիտալ ասելով, մենք հասկանում ենք այս դիպուածում այն բոլոր բնական ոյժերը, որոնք սնունդ են տալիս բոյսերին։ Եւ եթէ հողային արտադրութեան նուազման օրէնքը վերի օրինակներով արդէն պարզած ենք համարում, գուցէ Ձեզ էս աւելորդ չթուի դէթ անցնելով միայն յիշել այն դիտողութիւնը, որը այս հարցի նկատմամբ արած է գերմանական քաղաքատնտես ֆոն Թիւնէն իւր «Կղզիացած Տէրութիւն» նշանաւոր գրուածքի մէջ։ Ֆոն Թիւնէնը հաշվում է, որ, եթէ մի վարելահողի վրայ սփռելու լինենք $^1/_2$ ցոլլ (մօտ $^1/_{10}$ վերշոկ) տիղմ, արդիւնքը կ'աւելանայ $^1/_2$ ցորենահատիկով, բայց երկրորդ կէս ցոլլը արդիւնքը ոչ թէ կէս, այլ միայն երեք ութերորդ ցորենով կ'աւելցնի, երրորդ կէս ցոլլ տիղմը՝ միայն մի քառորդով և այլն։—Մի այլ գրող դիտել է Սաքսոնիայի համար, որ մի միջակ հող, մշակուած ամենասքանչելի, խելացի և հարուստ կերպով, կարող է մի ակրին տալ 60 թալեր հում և 14 թալեր, ուրեմն քիչ աւելի քան 23% զուտ արդիւնք. մինչդեռ միևնոյն տեսակ հողը, մշակուած սովորական կերպով, կարող է տալ միայն 20 թալեր հում, բայց $7^1/_2$ թալեր կամ մօտ 38% զուտ արդիւնք։

Անշուշտ Դուք յիշում կ'լինէք, որ հողային արտա-

դրութեան օրէնքը մեկնելով, ես ի մտի ունէի ցոյց տալ, թէ ինչու անհրաժեշտութիւն կայ ժամանակով մի երկրի վատ հողերը էս մշակել, չնայելով, որ վատ հողերի մշակութիւնը թանկ է նստում։ Եթէ հողի արտադրութիւնը գնալով նուազում է, էս առաւել մեծ չափով նուազում է նորա զուտ արդիւնքը. այդ մենք տեսանք վերը. իսկ նուազած, չափաւոր զուտ արդիւնքով ձեռնտու կարող է լինել նաև վատ հողերի մշակութիւնը։ Բայց այս մեկնութիւնը դեռ կատարեալ ճիշտ չէ, որովհետև եթէ հողի զուտ արդիւնքը, մեր վերև բերած ցուցակի համեմատ ներկայացնում էր ծախսած կապիտալի սկզբում 50%, յետոյ միայն 25%, այդ նորանից է, որ մենք երկու հանգամանքներում էս արդիւնքի գները հաւասար ենթադրեցինք։ Այդ մի անճշտութիւն էր, բայց մի անճշտութիւն, որը ոչնչով չէ կարող փոփոխել մեր ասածները վերաբերեալ հողի արտադրութեան նուազման, քանի որ մեր խօսքը այնտեղ ոչ միայն զուտ օգուտի, այլ և հում արդիւնքի քանակութեան վերայ էր։ Իսկապէս, երբ հողատէրերի ընդհանրութիւնը, տեսնելով պահանջի աճումը, վճռում է աւելի մեծ կապիտալ դործ դնել հողերի վերայ, իսկ հողը, չնայած դորան, նոյն չափ աւել արդիւնք չէ տալիս, հողի բերքերի գները բարձրանում են և ոչ թէ մնում նոյնը, ինչ նոքա առաջ էին։ Առանց գների բարձրանալուն հողատէրերը երբէք չէին համաձայնուիլ շարունակ կերպով աւելացնելու հողի վրայ մսխելու կապիտալը։

Բայց հենց որ գները կ'բարձրանան մինչ մի աստիճանի, ուր աւելի ստոր յատկութեան հողերի մշակութիւնը շատ թէ քիչ ձեռնտու կ'լինի, այդ հողերը իսկոյն կ'սկսուեն մշակուել։

Եւ իսկապէս ենթադրենք, թէ այն հողերը, որոնց

մշակելը այսօր ձեռնտու չէ, կարող են ցորեն տալ ոչ պակաս քան 65 կոպէկ նստուածքով փութը. իսկ ձեռնտու չէ այն պատճառով, որ մինչ այժմ մշակուող, ուրեմն լաւ հողերը նստեցնում են ցորենի փութը, ենթադրենք, միայն 50 կոպէկ։ Մեր վերը ասածներին համեմատ տեսնենք, թէ երբ կ'սկսուեն մշակուել փութը 65 կոպէկ նստեցնող հողերը, ընդունելով, որ լաւ հողերի համար մինչ այժմ հաշիւը հետևեալ կերպով էր ներկայանում՝

Կապիտալ	հում արդիւնք	գինը բոլորը	օգուտ	և կամ %-ով։
1000 ր.	3000 փութ	50 կ. 1500 ր.	500 ր.	50%

Ժամանակով գործադրելի կապիտալը կիսով աւելացվում է, իսկ հում արդիւնքը աւելանում է միայն մի երրորդով. ցորենի գինը բարձրանում է փութին հինգ կոպէկով. հետևապէս հաշիւը փոխվում է այսպէս՝

Կապիտալ	հում արդիւնք	գինը բոլորը	օգուտ	և կամ %-ով։
1500 ր.	4000 փութ	55 կ. 2200 ր.	700 ր.	$46\frac{1}{2}$%

Ժամանակով կապիտալը կրկին կիսով աւելանում է, իսկ հում արդիւնքը աւելանում է միայն մի քառորդով, ցորենի գինը բարձրանում է կրկին հինգ կոպէկով, ուրեմն՝

Կապիտալ	հում արդիւնք	գինը բոլորը	օգուտ	և կամ %-ով։
2250 ր.	5000 փութ	60 կ. 3000 ր.	750 ր.	33%

Ժամանակով կապիտալը կրկին կիսով աւելանում է, իսկ հում արդիւնքը միայն մի հինգ երորդով, գինը բարձրանում է կրկին 5 կոպէկով, ուրեմն՝

Կապիտալ	հում արդիւնք	գինը բոլորը	օգուտ	և կամ %-ով։
3375 ր.	6000 փութ	65 կ. 3900 ր.	525 ր.	15%

Հողատիրոջ զուտ արդիւնքը, չնայած բազմապատկած ծախքերին, ոչ միայն համեմատապէս չաւելացաւ, այլ և աբսոլուտ կերպով պակսեց, իջնելով 750 ռուբլուց դէպի 525 ռուբլի։ Ակնյայտ է, որ ցորենի գինը չի կարող կանգնել 65 կոպէկի վրայ, այլ անպատճառ պէտք է բարձրանայ 65-ից վեր. իսկ այդ դեպքում փութը 65 կոպէկ նստեցնող հողերը կարող են տալ արդէն մի մասնաւոր օգուտ նոցա մշակողներին։

Բայց միթէ իսկապէս կարելի է, որ, վատ հողերը մշակելու համար, սպասուի մինչ այն ժամանակը, երբ լաւագոյն հողերը այլ ևս անկարող կ'լինեն իրենց սեպհականատէրերին բաւականաչափ զուտ օգուտներ տալ։ Տարակոյս չկայ, որ պատասխանը պիտի բացասական լինի մանաւանդ այն դարեշրջանների համար, երբ մի ազգ իւր ամենամեծ աճելութեան մէջ է գտանվում, իսկ միւս կողմից, երբ լաւագոյն հողերի արտադրութիւնը կրկնապատկելու համար այլ ևս կապիտալի ոյժը մերժում է։ Եւրոպայի շատ տէրութիւններ, կարող եմ ասել, այդ դրութեան մէջ են, մանաւանդ Անգլիան։ Այս վերջին երկրի երկրագործութիւնը պահպանվում է գրեթէ միայն կապիտալի, որ նոյն է, թէ կատարելագործութեան ոյժով. նորա հողը տալիս է շատ աւելի, քան այլ երկիրներ նոյն տարածութեան հողի վերայ, այնպէս որ սպասել, թէ մի վաթսուն տարում Անգլիայի մի դեսեատին հողը պիտի տայ երկու անգամ աւելի, քան նա այժմ տալիս է, կ'լինէր անխելացի յոյսեր կապել։ Բայց թէ Անգլիայի ազգաբնակութիւնը նոյն վաթսուն կամ քիչ աւելի կամ պակաս տարիների ընթացքում պիտի կրկնապատկուի, — այդ բանի համար մենք ոչ միայն յոյս սնենք, այլ և համոզուած սպասում ենք նորան։ Եւ ինչ է լինում այդ յարաբերութեան հետևանքը? Այն, որ հողի արդիւնքների գները շատ աւելի արագ են բարձրանում, քան այնքան, որքան մենք վերի հաշիւներում ընդունեցինք։ Իսկ դոցանից օգտուողները լաւագոյն հողերի տէրերն են լինում, ստանալով այն ռենտը, որի մասին մենք առաջ խօսում էինք Ռիկարդօի ռենտի թէօրէն բացատրելու ժամանակ։

Դուք այժմ, տիկիններ և պարոններ, համոզուած էք, որ նոյն իսկ բնութեան մէջ կան հանգամանքներ, որոնք մղում են հողի արդիւնքների գները դէպի վեր. այդ այն հանգամանքներն են, որոնք կազմում են հողային արտադրութեան նուազման մեզ այժմ արդէն ծանօթ օրէնքի հիմքը: Բայց ինչ, միթէ դորանով արդէն ասուած է, թէ հողի արդիւնքների գները միշտ և շարունակ պիտի բարձրանան? Այդպէս պիտի լինէր, եթէ այդ օրէնքը միակ իշխող զօրութիւնը լինէր երկրագործական արդիւնաբերութեան մէջ: Բայց այդ այդպէս չէ, որովհետև այդ օրէնքը իւր դիմաց ունէ մի ոյժ, որը նորա հակառակ ազդեցութիւնը ունէ գների վերայ, մղելով սոցա դէպի վայր: Այդ ոյժը՝ քաղաքակրթութիւնն է, այդ խօսքի ամենաընդարձակ մտքով, բայց մասնաւորապէս երկրագործական յառաջադիմութիւնը և տեխնիկական գիւտերը, որոնց միջոցով երբեմն երկար տարիների համար կարելի է լինում համեմատապէս քիչ զոհաբերութեամբ երկրագործական արդիւնաբերութիւնը աւելի մեծացնել, քան նոյն ժամամիջոցում ազգաբնակութիւնը աճել կարող է: Օրինակ վերցնենք Ֆրանսիան: Յորենի գների ցուցակներից երեւում է, որ 1797 թուականից մինչ 1847 թուականը, ուրեմն ամբողջ լիսուն տարիների ընթացքում, յորենի տասնեկան տարիների միջին գները ամենևին չեն բարձրացել: Ինչու? որովհետև այդ ժամամիջոցում երկրագործութիւնը աւելի մեծ յառաջադիմութեան մէջ էր, քան ազգաբնակութեան թիւը: Չիպսլոլիտ Պասսի, որը մի շատ յայտնի ֆրանսիացի քաղաքատնտես է և որը մանաւանդ երկրագործութեան մասին դեղեցիկ հետազօտութիւններ ունէ արած, իւր մի գրուածքի մէջ յիշում է կալուածներ, որոնք ներկայ դարուայ սկիզբներում հազիւ 12 հեկտոլիտր և կամ մօտ 6 չետվերտ յորեն էին տալիս, իսկ քառասնական

թուականներին նոքա տալիս էին 20 հեկտոլիտր և կամ մօտ 10 չետվերտ: Ժամանակուայ գների համեմատ այդ մի աւելի արդիւնք էր 170 ֆրանկի, մինչդեռ, ասում է Պասսին, ծախքը աւելացել էր միայն 70 ֆրանկով: Անգլիայի համար կարելի է դեռ աւելին անգամ պնդել. Միլլ'ը, խօսելով յիսուն թուականների սկզբում, ասում է. «այս վերջի տասն և հինգ կամ քսան տարիներում հողի մշակութեան կատարելագործած եղանակները այնքան արագ են տարածուել Անգլիայում, որ հողը մինչև անգամ աւելի մեծ արդիւնք է տալիս համեմատութեամբ նորա վերայ դործադրած աշխատութեան. ցորենի գները, միջին հաշուով, անկասկած աւելի ցածրացել են»:

Ես կարող կ'լինէի ձեզ անթիւ այլ և նոյնչափ հեղինակաւոր վկայութիւններ բերել ապացուցելու համար, որ, արդարև, երբեմն երկրագործական արդիւնաբերութիւնը նորանոր սիստեմների և գիւտերի պատճառով, աւելի շատ է աւելանում, քան ազգաբնակութիւնը: Այդպիսի ժամանակներում բնական է, որ հողի բերքերի գները կամ չեն շարունակում թանկանալ և կամ, ընդհակառակը, ընկնում են: Ինչ ասել կ'ուզէ, որ այս վերջին դէպքում լաւ հողերի տէրերի ընտը իջնում է, ընկնում է, նուազում է, չնայած, որ, ժամանութեան պատճառով, նուազ բերրութեան հողերը այլ և այլ դաղարում են մշակուել: Մինչ այժմ, դիցուք, երեք տեսակ հողեր էին մշակվում, որոնք հաւասար տարածութեան վերայ և հաւասար ծախքերով մէկը 100, միւսը 80, երրորդը 60 չետվերտ էին տալիս: Առաջինը ստանում էր ուրեմն 40, երկրորդը 20 չետվերտ ընտ, իսկ երրորդը, բացի հասարակ օգուտից, ոչինչ ընտ չէր ստանում: Գիւտերի կամ նոր սիստեմների ազդեցութեամբ թող, որ գները ընկնեն. հասկանալի է, որ 60 չետվերտ

տուող հողերը այլ ևս ձեռք չի տալ մշակել. այն ժամանակ 80 չետվերտ տուող հողերը այլ ևս ոչ մի ռենտ չեն ստանալ, իսկ 100 չետվերտ տուողները կ'ստանան միայն 20 չետվերտ ռենտ, փոխանակ առաջուայ քառասունի: Ինչ մենք ասացինք գիւտերի և մշակութեան կատարելագործած եղանակների մասին, նոյնը կարելի է ասել և բոլոր այն հանգամանքների համար, որոնք նոյն տեսակ են ազդում գների վերայ: Գետնախնձորը, կարտոֆէլը, երբ ընդհանուր գործածութեան առարկայ դառաւ Եւրոպայի մանաւանդ մի քանի երկիրներում, ուր նա բանւոր և չքաւոր դասի համար հացի տեղը տուեց, իջեցրեց ցորենի գները: Գետնախնձորը, որը այժմ և արդէն վաղուց մեծ գործածութիւն է գտնում Գերմանիայում, Անգլիայում, բայց մանաւանդ Իրլանդիայում, գետնախնձորը, ասում եմ, որը շատ հեշտութեամբ և առատ է բուսնում և անհամեմատ աւելի քիչ ծախք է պահանջում, նուազեցրեց ցորենի պահանջը. ուստի այն տարիներում, երբ գետնախնձորը սկսեց արագութեամբ տարածուել, ցորենի գները պէտք է ընկնէին և անձեռնտու դարձնէին ստոր յատկութեան հողերի մշակութիւնը ցորեն ստանալու համար: Գները պակսելով, ռենտը պիտի նուազէր լաւագոյն հողերի համար, իսկ դորանից—ընդհանուր գանգատ կայուածատէրերի կողմից: Ես չիշեցի գետնախնձորի ներմուծումը, բայց նոյնն է պատահում, երբ երկար տարիներով շարունակ ցորենի առատութիւն է լինում մի երկրում, որը այս կամ այն պատճառով սովորութիւն չունէ աւելորդը այլ երկիրներ արտահանելու:

Բայց պէտք է ասած, որ երկրագործական արդիւնքների գները աժանացնող այդ բոլոր վերը չիշած հանգամանքները միայն ժամանակաւոր կերպով են կարողանում

դիմադրել այն բանին, որ մենք հողի արդիւնաբերութեան նուազման օրէնք անուանեցինք: Գները թանկանալու բուն պատճառը, որպէս տեսանք, ազգաբնակութեան աճումն է մի կողմից և հողի անկարողութիւնը միշտ կրկնապատկել իւր արդիւնքները՝ միւս կողմից: Իսկ սոքա այնպիսի ոյժեր են, այնպիսի հանգամանքներ են, որոնք միշտ գոյութիւն ունեն, ուրեմն սոցա ազդեցութիւնը յարատև է և ոչ միայն ժամանակաւոր, ի հարկէ, եթէ աչքից չկորցնենք այն, որ մեր խօսքը վերաբերում է մի ազգի և հասարակութեան, որի համար ներկայի տեսակէտից գրեթէ յարատև է մի բան, որը տեւում է ամբողջ դարեր: Գետեր, երկրագործական մեծ գիւտեր միշտ չեն հնարվում, բայց դորա հակառակ մի ազգաբնակութիւն կարող է դարերով աճել, աճել շարունակ, գրեթէ առանց ընդհատման. այդ մենք տեսանք մեր առաջի դասախօսութեան մէջ: Հողի արդիւնքները թանկացնող և հողային ռենտը մեծացնող ֆակտորները ուրեմն աւելի ուժեղ են, քան նոցա աժանացնող ֆակտորները: Իսկ եթէ հողերի գները պէտք է ընդհանրապէս բարձրանան—այդ արդէն վերը պարզած հանգամանքների բնական հետևանքն է: Աւելորդ է ասելն անդամ, որ հողերի գները ամենից շատ այն տեղերում պիտի բարձրանան, ուր ազգաբնակութիւնը ամենից զգալի կերպով աճում է՝ քաղաքներում և մանաւանդ, ի հարկէ, մեծ քաղաքներում և սոցա շրջականներում: Դեռ մօտ երեսուն տարի առաջ մի դեսեատին հողը Փարիզի քաղաքային դռների առջև տալիս էր մինչ 275 ֆրանկ տարեկան ռենտ, մինչդեռ Փարիզից ոչ շատ հեռու Ֆոնտենեբլօ քաղաքի մօտ նա տալիս էր միայն 30-ից մինչ 70 ֆրանկ:

Թէ արդեօք [illegible] այլ և այլ երկիրներում հողային ռենտը [illegible] և որքանով

է նա բարձրացել — դորա մասին մենք կարող ենք միայն մոտաւորապէս խօսել, որովհետև հողերի համար ամեն ժամանակ ճիշդ գնահատութիւններ չեն եղած։ Մի համեմատութիւն 15-երորդ դարի ներկայ ժամանակների հետ ցոյց է տալիս, ասում է անգլիական քաղաքատնես Բոջերս իւր մի աշխատութեան մէջ քսան տարի առաջ, որ Անգլիայում հողային ռենտը միջին հողերի համար փողի հաշուով բարձրացել է ութսունից մինչ հարիւր անգամ, մինչդեռ նոյն ժամանակամիջոցում ցորենի գինը աւելացել է միայն տասերկու, իսկ բանուորի վարձը միայն տասն անգամ. այդ նոյնն է ասել, թէ հողային ռենտը միջին հողերի համար աւելացել է 8—10 անգամ։ Մի ժամանակակից հեղինակ հաշուում է 17-երորդ դարուայ սկզբի համար 6 միլլիոն ֆունտ ստերլինգի համայն հողային ռենտը թէ վարելահողերի, թէ տների և հանքերի. (մի ֆունտ ստերլինգ հաշուեցէք 6 ռուբլի 25 կոպէկով արծաթ)։ 1714 թուականին հասցնում էր մի այլ հեղինակ նոյն ռենտը 15 միլլիոնի։ Արթուր Ինգը, որը Անգլիայի ամենահեղինակաւոր գիւղատնտեսն էր, խօսելով 1771 թուականին, հաշուում է նոյն ռենտը 16 միլլիոնի։ 1800 թուականին մի այլ հեղինակ 20 միլլիոնի էր հասցնում նորան, իսկ 1814 թուականին Վեկեֆիլդը որոշում է նորան 20 միլլիոն ֆունտ ստերլինգի. Մակ—Կուլլոխի անուանի քաղաքատնտեսը 1838 թուին որոշում է նորան $29^1/_2$ միլլիոնի։ Աւելի մօտ ժամանակների համար մենք ունենք այլ աղբիւրներ։ Անգլիայում, աղքատանոցները պահելու համար, մի առանձին հարկ կայ, որ աղքատների հարկ են անուանում և որին ենթարկուած են բոլոր հողերի տարեկան եկամուտները. դոքա հաշուած էին 1841 թուականին միայն բուն Անգլիայի և Վալիսի համար աւելի քան 32 միլլիոն 600,000 ֆունտ ստերլինգի, իսկ 1864—

65 թուականին հողերի տարեկան եկամուտը հաշուում էր 46 միլլիոն 700 հազար ֆունտ ստերլինգից քիչ աւելի։ Եւ այս բոլոր հաշիւների մէջ բաց են թողուած և Շոտլանդիան և Իրլանդիան։

Եթէ պարզութեան համար վերոյիշեալ թուերը ամփոփելու լինենք մի ցուցակի մէջ, մենք կ'ստանանք, որ միմիայն Անգլիայում և սորան կից Վալիսում, բայց առանց Շոտլանդիայի և Իրլանդիայի, Անգլիայի ամենահեղինակաւոր տնտեսագէտների հաշիւների համաձայն՝ հողերի սեպհականատէրերին հասնելի ռենտը կոլոլ թուերով մոտաւորապէս այսքան էր՝

1600 թուին	—	—	38	միլլիոն ռուբլի
1714 թուին	—	—	94	— —
1771 թուին	—	—	100	— —
1814 թուին	—	—	125	— —
1838 թուին	—	—	185	— —
1841 թուին	—	—	205	— —
1865 թուին	—	—	292	միլլիոն ռուբլի։

Ես շտապում եմ աւելցնել, որ ռենտը այս բոլոր օրինակներում եկամուտի տեղ է գործածուած և ոչ Ռիկարդօի ռենտի մտքով։ Բայց չէ՞ թէ այն ռենտերի մէջ պարունակվում է նաև իսկական, Ռիկարդօի մտքի համաձայն ռենտը?

Բայց պէտք է և այն ասած, որ տների, երկաթուղիների, հանքերի և այլոց ռենտը անհամեմատ աւելի շատ է բարձրացել, քան բուն երկրագործական հողերի ռենտը. 1805-ից մինչ 1865 թուականը, ուրեմն լիսուն տարուայ ընթացքում առաջինը աւելացել է 393 պրոցենտով, ուրեմն մօտաւորապէս չորանդամ, մինչդեռ երկրորդը, երկրագործական հողերի ռենտը՝ միայն մօտ 28 պրոցենտով։

Բաւականանանք և այն թուերով, որ մենք տուինք

Անգլիայի համար. մեր նպատակն էր ռենտի գոյութեան, և նորա բարձրանալու համար մի օրինակ բերել և այդ օրինակը բերինք. իսկ եթէ դորա վերայ աւելցնելու մի բան է մնում, այդ այն է, որ բոլոր այն երկիրներում, որոնք տնտեսական առաջդիմութեան մէջ են, նոյն երևոյթները նկատուած են։

Ասելով, թէ, ընդհանուր առմամբ, երկրագործական հողերի ռենտը աւելի նուազ կերպով է բարձրանում, քան այլ հողերինը և բերելով դորա համար թուանշանական ապացոյց Անգլիայի համար, մենք սակայն զգում ենք, որ դորանով, հակառակ մեր մտադրութեան, նուաստացրինք երկրագործական արդիւնաբերութեան մէջ արած առաջդիմութիւնը, որը, առանձին վերցրած, միայն զարմացք և զմայլմունք կարող է պատճառել նորան, ով այդ առաջդիմութեանը հետևել և նորան ուսումնասիրել է դրական տրուածների հիման վերայ։ Նոյն ազդեցութիւնը արած կ'լինի ձեզ վերայ նաև նոյն իսկ այս ֆորմուլը՝ «Հողի արտադրութեան նուազման օրէնքը» և այլ շատ դարձուածներ, որ մենք գործ ածեցինք մինչ այժմ իրողութիւններ արտայայտելու համար, որոնց ճշտութիւնը ապացոյցներով հաստատեցինք։ Մենք վերապահում ենք մի առանձին դասախօսութեան և կամ գրուածքի ձեզ ցոյց տալու համար, տիկիններ և պարոններ, այն բոլոր հրաշալիքները, որ իրագործել է երկրագործութիւնը Եւրոպայի մի քանի երկիրներում այս դարուայ ընթացքում. հրաշալիքներ, որոնց կ'արտադրէ ամեն մի այլ երկիր, եթէ միայն սա առաջդիմութեան մէջ է և եթէ այդ երկրում ևս փորձը և դիտութիւնը նոյնչափ ներդաշնակ կերպով ձեռք ձեռքի տուած ընթանան, որպէս մի քանի յայտնի երկիրներում։

Խօսելով բաւականի մանրամասնօրէն այն հանգամանքների մասին, որոնք Ռիկարդօի ռենտի թէօրէի բովանդակութիւնն են կազմում, մենք պիտի խօստովանենք, որ մեզ շատ դժուար է թուում նոյն իսկ այստեղ յիշել այն բոլոր հարցերը, որոնց մէջ այդ թէօրէն դեր է խաղում։ Եթէ մենք ուզենալու լինենք տարածուել այդ հարցերի վերայ, մենք բոլորովին պիտի թողնէինք հողը և հողագործութիւնը։ Եւ ինչ մեծ հարցի մէջ Ռիկարդօի թէօրէն, այսինքն հողային ռենտի գոյութեան և հողային բերքերի արտադրութեան նուազման օրէնքի ապացուցած լինելը դեր չէ խաղում! Այդ հարցերի թիւը շատ մեծ է, որովհետև այդ թէօրէն հարուստ է ամենանշանաւոր հետևանքներով թէ զուտ գիտութեան և թէ հասարակական քաղաքականութեան խնդիրների համար։ Այդ թէօրէն չէ՞ ցուցնում ամենաշոշափելի կերպով, որ մէկ անհատի հարստութիւնը անպատճառ պտուղ չէ այդ նոյն անհատի սեպհական աշխատութեան, սեպհական ջանքի? Իսկ եթէ այդ այդպէս է, որքան եզրակացութիւններ կարելի է դուրս բերել դորանից հարկերի հարցի համար, անհատական կարողութեան աղբիւրների հարցի համար և այլն։

Վերցնենք նոյն իսկ սեպհականութեան հարցը։ Սեպհականութիւնը, ասում են շատերը, աշխատանքի հետևանք է և որովհետև սեպհականութիւնը անհատական է, ուստի շատերը պնդում են, թէ անհատական սեպհականութիւնը պէտք է համարուի նոյն այդ անհատի աշխատանքի արդիւնք։ Ռիկարդօի ռենտի թէօրէն, սակայն, մեզ ցոյց է տալիս մի հանգամանք, որով պարզվում է, թէ ինչպէս առանց սեպհական աշխատանքի կարող է մի հողատիրոջ համար եկամուտ աւելանալ։

Ուրեմն այն տնտեսագէտները, որոնք մի մարդու ունեցած կարողութեան աղբիւրը միայն և միմիայն նորա սեպհական աշխատանքի մէջ են տեսնում—չարաչար սխալվում են։ Եւ ովքեր են այդ կարգի տնտեսագէտները? Այդ նոքա են, որոնք գիտական հետազօտութիւնների մէջ անգամ քաղաքականութեան տեսակէտներ են մտցնում. մարդիկ, որոնք վախենում են ճշմարտութիւնը, զուտ ճշմարտութիւնը ոչ միայն խոստովանել, այլ և տեսնել, ճանաչել։ Ինչ արած, այդ կարգի մարդիկ համոզուած են, որ զուտ ճշմարտութիւնը խոստովանած, մեր հասարակութեան հիմունքները խախտուած կ'լինեն. որովհետև, մտածում են նոքա, մեր այժմեայ քաղաքակրթութիւնը հիմնուած լինելով անհատական սեպհականութեան գաղափարի վերայ, իսկ սեպհականութեան յարգը նորա ձեռք բերելու միջոցների վերայ հիմնուած գոլով, նոյն այդ սեպհականութեան սկզբմունքը կ'կորցնէ իւր իշխանական ոյժը, եթէ ասելու լինենք, թէ կարելի է նաև մի արդիւնքի տէր լինել նաև առանց սեպհական աշխատանքի։ Կարծես թէ մեր ամբողջ հասարակութիւնը, ուզում եմ ասել նորա կազմակերպութիւնը, նորա անդամների իւրաքանչիւրի իրաւունքները միայն մի սկզբմունքի վերայ են հիմնուած, կարծես թէ, ասում եմ, մեր հասարակական բոլոր հիմնարկութիւնների, բոլոր օրէնքների միակ նպատակն է իւրաքանչիւրի սեպհականութիւնը և կամ նորա եկամուտների մեծութիւնը իւրաքանչիւրի թափած աշխատութեան, ջանքի, մեծութեան համեմատցնել! Այդ սակայն մի սխալ է, որը գործում են որպէս ազատամիտ կոչուած քաղաքատնտեսները, նոյնպէս և հասարակութեան այժմեայ կազմակերպութեան ծայրահեղ թշնամիները, և կամ, որպէս զի ոոցա իրանց անունով անուանած լինենք—սոցիալիստները։ Առաջինները, որոնք Ադամ Սմիթի դպրոցին

պատկանելու և այդ դպրոցի շարունակողներ լինելու հաւաստիութիւնը ունեն, պնդում են, հակառակ ճշմարտութեան և ակներև արած փաստերի, որպիսիներից մէկը և նշանաւորը Բիկարդոի վերը բացատրած ընտի գոյութիւնը կարող է համարուել, թէ իբր անհատական սեպհականութիւնը հաշտվում է ամենագուտ արդարութեան պահանջողութիւնների հետ. արդարութիւն, որը պահանջում է իւրաքանչիւրին տալ ըստ նորա մատուցած ծառայութիւնների. մինչդեռ սոցիալիստները, ընդհակառակը պնդում են նոյն փաստերը ձեռքին, թէ, որովհետև անհատական սեպհականութեան իշխանութեան տակ այն տեսակ անարդարութիւններ կարող են տեղի ունենալ հարստութիւնների բաժանման մէջ, որպէս Բիկարդոից մատնացոյց արած և գոյութիւնը հաստատած ընտը ինքն ըստ ինքեան պիտի բիւեցնէ, ուստի, ասում են սոցիալիստները—անհատական սեպհականութիւնը իբր արդարութեան ընդդէմ մի հաստատութիւն է։ Եւ առաջինները և երկրորդները ծայրահեղութեան մէջ են, և մենք կարող ենք աւելցնել, որ սխալը այդ երկու հանգամանքների մէջ էլ միևնոյնն է. որովհետև երկուսն էլ ենթադրում են, որ մի հիմնարկութիւն, մի հաստատութիւն միայն այն ժամանակ ընդունելի է, երբ նա ամեն կողմանէ կատարեալ է, երբ նա ոչ մի քննադատութեան ենթակայ չէ կարող լինել։ Այդ առիթով ես Ձեզ կ'խնդրէի, տիկիններ և պարոններ, մտաբերել իմ առաջին դասախօսութիւնից այն խորհրդածութիւնը, որ ես հարկաւոր դատեցի անել ցոյց տալու համար, որ ճշմարտութիւնները միայն համեմատական են, որ քանի որ մեր մարդկային միտքը շատ տկար է կեանքը իւր վերջնական նպատակի տեսակէտից հասկանալ, կեանքի վերաբերեալ գիտութիւններին էլ կ' արտայայտեն միայն համեմատական ճշմարտութիւններ։

Այդ մտքերը ճշմարիտ կարող են լինել միայն ենթադրելով որ կեանքի նպատակը յառաջդիմութիւնն է. այդ պատճառով ես այն գաղափարի եմ, որ իմանալու համար թէ անհատական հողային սեպհականութիւնը լաւ թէ վատ հաստատութիւն է, պէտք է մարդս իրան այս հարցին պատասխանէ՝ թէ արդեօք հողային անհատական սեպհականութեամբ նպաստվում է յառաջադիմութիւնը ներկայ հանգամանքների մէջ, թէ ոչ։ Փոխանակ յառաջադիմութիւն բառը գործածելու, ասենք՝ արդիւնաբերութիւն, արդիւնաբերական միջոցների, սիստեմների մէջ կատարելագործութիւն, ապահովութիւն և այլն։

Այդ դեռ բաւական չէ. անհատական հողային սեպհականութիւնը դատապարտելու համար, հարկաւոր է համեմատել նորա տուած օգուտները և կամ նորանից պատճառած անարդարութիւնների չափը այն դրութեան հետ, որը պիտի ստեղծուէր և կամ կ'ստեղծուի անհատական սեպհականութեան վերացնելով։ Հարցի լուծումը, որպէս տեսնում էք, շատ աւելի դժուար է, քան այդ առաջի անգամից թւում է. մանաւանդ, որ համեմատութիւններ անելը զանազան հաստատութիւնների մէջ, հասարակաց, տնտեսական և քաղաքական ասպարիզում, կազմում է դժուար, փշերով լիքը մի արհեստ, դէպի որը ձեռք մեկնողը պիտի զինուորուած լինի ոչ միայն զօրեղ լոգիկով, այլ և խորը գիտութեամբ մարդկային բնաւորութեան և ազգերի կեանքի պատմական ընթացքի։

Տիկիններ և պարոններ, ես Ձեզ կ'ինդրէի լուրջ ուշադրութիւն դարձնել ասածիս վերայ, զի տարաբաղդ է այն հասարակութիւնը, ուր այդ ճշմարտութիւնը դեռ զգացուած չէ։ Տարաբաղդ է նա, ասում եմ, եթէ նորա մէջ իշխող կարծիքը այն է, թէ հասարակաց բարօրութեան վերաբերեալ հարցերը կարող են թեթև սրտով վճռուել, եթէ իշխող կարծիքը ընդունում է, թէ կարելի է մի հաստատութեան այս կամ այն կողմի թերութեան պատճառով փոխել նորան։

Բայց եթէ սեպհականութեան նման մի հիմնական հաստատութեան վերացնելու առաջարկողից ես պահանջեցի վերը յիշած յատկութիւնները, այդ, սակայն, նորա համար չէր, որպէս զի ամեն մի վերանորոգութիւն անկարելի յայտնէի։ Չեռու դորանից. ազգերի զարգացման պատմութեան մէջ մենք տեսած ենք մեծամեծ հաստատութիւններ՝ յետագայ ժամանակներում փոխած կամ խսպառ վերացրած։ Մի ժամանակ կար ստրկութիւն և նա վերացուեց. կար ճորտութիւն—և նա վերացուեց. կար արուեստ բանացնելու մէջ հին համքարային կազմակերպութիւն—նա ևս վերացուեց. վերջապէս նոյն իսկ հողային սեպհականութեան մի տեսակը, որը, որպէս նորագոյն հետազօտութիւնները ցոյց են տալիս, ընդհանրապէս համայնքային սեպհականութեան բնաւորութիւնն էր ունեցած ազգերի կազմակերպութեան սկզբնական դարերշրջաններում, որպէս դեռ ցայսօր Ռուսաստանի բազմաթիւ նահանգներում, Զուիցերիայում, գերմանական երկիրների դեռ մի քանի տեղերում և այլն, այդ հողի համայնքային սեպհականութիւնը, ասում եմ, չէր արդեօք նոյն տեսակ հիմնական մի հաստատութիւն եւրոպական ազգերի համար, որպէս այժմ անհատական հողային սեպհականութիւնը նոյն ազգերի մեծութեան համար. և ինչ, նա մնաց անխախտ?

Դուք տեսնում էք, յարգելի ունկնդիրներ, որ, ցոյց տալով հասարակաց մի մեծ հաստատութեան վերացնելու դժուարութիւնները, իմ գիտաւորութեան մէջ չէր քարոզել մի մոլեռանդ յամառութիւն հին կարգ ու կանոն-

ների պահպանելու մէջ։ Ինչ բանի դէմ ես բողոքում եմ, այդ սա է՝ չասել, թէ մի հաստատութիւն վատ է միայն այն պատճառով, որ նորանով արդարութիւնը ամեն դէպքում ապահոված չէ. չասել, թէ, որովհետև հողի անհատական սեպհականութեամբ ընտ է ստեղծվում նըպաստուած հողատէրերի համար, ուրեմն և հողը չպիտի առանձին մարդկերանց սեպհականութիւն կազմէ։ Փոխանակ այդ ասելու, հարկաւոր է դիմել նոցա, որոնք անհատական սեպհականութեան մէջ ոչ թէ պատմական, ուրեմն և մարդկային, այլ մի ինչ որ նախասահմանեալ հաստատութիւն են տեսնում, և համոզել նրանց, որ սեպհականութիւնը այնքան զեղծ չէ թերութիւններից, որպէս նոքա կարծում են և որ, ուրեմն, դորա դէմը պիտի առած, բայց ի հարկէ, ոչ անպատճառ նորա խապառ վերացնելով, այլ, օրինակի համար, հողային հարկերի սիստեմը փոխելով։ Դուք բողոքում էք, որ նպաստուած հողատէրերը, առանց սեպհական աշխատանքի, ընտ են ստանում, այսինքն մի օգուտ, որը իսկապէս նոցա կարող էր և չհասնել, այլ որից պէտք է ամբողջ հասարակութիւնը օգտուէր,—ստեղծեցէք ուրեմն հարկերի մի սիստեմ, որով ընտ ստացող հողատէրերը ընտ չստացողներից աւելի հարկ վճարելու ստիպուած լինէին. օրինակ՝ կատարելագործելով պրոգրեսսիւ և կամ աճող կոչուած հարկային սիստեմը, որը եւրոպական մի քանի տերութիւններում արդէն մտցրած է և որը սորանումն է կայանում՝ իւրաքանչիւր մարդու եկամուտից ոչ թէ վերցնել միաձև կերպով մի յայտնի պրոցենտ, այլ, նայած եկամուտների մեծութեան, պահանջել, որպէս հարկ, աւելի ունեցողից նաև մի աւելի մեծ պրոցենտ. և այսպէս, 1000 բուբլի եկամուտ ունեցողից վերցնել դիցուք 2%, ուրեմն 20 բուբլի, 3000 բուբլի եկամուտ ունեցողից ոչ թէ կըրկին 2%, ուրեմն 60 բուբլի միայն, այլ դիցուք 5%, ուրեմն 150 բուբլի, 8000 ր. ունեցողներից 10%, ուրեմն 800 բուբլի և այլն։

Տիկիններ և պարոններ, ես զգում եմ, որ, խօսելով Ռիկարդօի ընտի թէօրէից վաղաժամ հետևանքներ դուրս բերողների դէմ, այնքան ընդարձակուեցի սեպհականութեան հարցի վերայ, որ թերևս տեղիք տուած լինեմ կարծելու, թէ ես մտադրութիւն ունեցած եմ քննել սեպհականութեան ծանրակշիռ հարցը նոյն իսկ այստեղ։ Բայց ես շատ մեծ կարծիք ունեմ Ձեր բարի ցանկութեան վերայ, որպէս զի յոյսով լինեմ, որ տուածիս դիտաւոր նպատակը Ձեր ուշադրութիւնից խոյս տուած չի լինիլ։ Ասելս այն էր, որ ընտի գոյանալը, որպէս միակ երևոյթ, բաւականաչափ ուժեղ չէ անհատական սեպհականութեան դէմ վճռողական արգումենտ ծառայեցնելու համար, որպէս այդ սոցիալիստ կամ իրենց այլ անուններ տուող քաղաքատնտեսներից շատերը մանաւանդ առաջ սովորութիւն էին շինել անելու։

Եթէ ես այստեղ դատափետում եմ սոցիալիստների սանց վարմունքը, անշուշտ, տիկիններ և պարոններ, սոցիալիստների հակառակորդներին հաճոյանալու համար չէ, որ ես այդ անում եմ։ Ես կ'ասեմ աւելին անգամ. սոցիալիստների հակառակորդներից շատերը աւելի աննենելի կերպով գործեցին, խրոխտ և համարձակ կերպով յայտնելով, որ նոքա Ռիկարդօի թէօրէն ընաւին չեն ընդունում, յայտնելով, թէ իբր հողային ընտը, Ռիկարդօի մտքով առած, ամենևին գոյութիւն չունէ։ Թէ ինչից էին վախենում այդ տնտեսագէտները—դուք այդ արդէն գիտէք՝ զէնք չտալու համար իրանց հակառակորդներին, սեպհականութեան պրինցիպը զինաթափ անելու։

Պատապարտելի վարմունք. մի՞թէ թոյլ է տրուած մի մարդուն, որը գիտութեան դրօշակով հասարակութեան առջևն է հանդիսանում, յերքել մի իրողութիւն այն ներքին զգացմունքով, թէ ինչ է, կան մարդիկ, որոնք այդ իրողութիւնից սխալ եզրակացութիւններ են դուրս բերում: Յերքել երկրագնտի շրջումը այն պատճառով, որ այդ նոր գիւտը կարող է սուրբ համարուած գրքերի վերայ անվստահութեան զգացմունքը տարածել սնահաւատ ժողովուրդի մէջ?! Բայց դա կաթոլիկ կղերականութեան մի տեսակէտ է, որի դէմ մարտնչելու գիտութիւնը իրեն միշտ պատիւ է համարել: Հողային ընտի գոյութիւնը, սակայն, նոյնքան անզօր մի սպառնալիք է սեպհականութեան հաստատութեան համար, որքան Գալիլէի յայտնած գաղափարը—մարդու բուն կրօնական զգացմունքները և հաւատը խախտելու համար: Ես արդէն վերը աշխատեցի Ձեզ այս միտքը պարզել, որ, եթէ սեպհականութիւնը մի օգտակար հաստատութիւն է, եթէ նա կանչուած է մեր հասարակութիւնների պատմական զարգացման յայտնի շրջաններում մեծ դեր կատարելու, սեպհականութեան այդ օգտակարութիւնը ամենևին նորանով չէ պայմանաւորուած, թէ արդեօք նա կատարեալ զերծ է թերութիւններից, թէ ոչ. թէ արդեօք նա համապատասխանում է արդարութեան ամենախիստ պահանջներին, թէ ոչ: Իսկ եթէ այդ այդպէս է, ինչ է նշանակում չափից դուրս վրդովուել գիտնականօրէն ակնարկ արած մի ճշմարտութիւնից, որը մի նշանաւոր հաստատութեան պակասութիւնների վրայ է բացում մեր աչքը: Բայց և միւս կողմից, եթէ այդ պակասութիւնը այնքան նշանաւոր է, որ կարող է սեպհականութեան դատը վտանգել, էլ ինչ հարկաւոր է, ասենք անգամ, էլ ինչ խելք է, մի ուսումնականի կողմից, որի աչքին իրերը միայն համեմատական նշանակութիւն կարող են ունենալ, ոչինչ ոյժ չ'ունայել, ոչ մի աչքակապութիւնից չքաշուել—սեպհականութեան ոչ միայն համեմատական օգտակարութիւնը, այլ արդէն նորա սրբութիւնը, անխախտութիւնը քարոզել: Ես լաւ հասկանում եմ, ի հարկէ, որ այն տնտեսագէտները, որոնց ուղղած են այս տողերը, վրդոված կ'մեղադրեն նոցա յանդիմանողներին, պատճառ բերելով այս, թէ նոքա ոչ թէ չեն ընդունում Ռիկարդօի ընտի թէօրէն, ոչ թէ չեն ընդունում հողային ընտի գոյութիւնը սեպհականութեան հաստատութիւնը անխախտ պահելու համար, այլ թէ, ընդհակառակը, նոքա հակառակ են Ռիկարդօին, որովհետև սորա թէօրէն սխալ և անհիմն են համարում: Այո, բայց այն ժամանակ հարկաւոր է ապացուցել Ռիկարդօի մտածողութեան եղանակի կեղծութիւնը, որը, որպէս տեսանք, երկու գլխաւոր փաստերի վրայ է հիմնուած. մէկը այն է, որ ազգաբնակութեան աճումը ստիպում է ժողովուրդին նուազ առ նուազ տարածել հողի մշակութեան սահմանները. և որովհետև մի երկրի հողը իւր բոլոր մասերում հաւասար յատկութիւն չունի, մի տեղ հողը նոյնը արտադրելու համար աւելի քիչ միսխ է պահանջում, քան թէ մի այլ տեղ, ուստի պարզ է, որպէս արեգակ, որ, եթէ երկու տեղերի արդիւնքներն էլ միևնոյն գնով ծախուելու լինեն, լաւ հողի տէրը աւելի կ'շահուի, քան թէ վատ հողի տէրը: Այդ բոլորից կեանքի և գիտութեան համար մի դրական եզրակացութիւն դուրս բերելու համար, մընում է, ուրեմն, միայն որոշել, թէ արդեօք հիշտ է, որ այդ արդիւնքները միևնոյն գնով կ'ծախուեն, և երկրորդ, թէ ինչ գնով պէտք է նոքա ծախուեն: Արդ, սոցանից առաջին հարցը պատասխանուելու դրեթէ կարօտութիւն չունէ. ես, իբրև գնող, շուկայ գնալիս, մի որոշ տեսակի և որոշ լաւութեան, որոշ յատկութեան ցորեն պիտի

գնեմ. ես ցանկանում եմ միևնոյն ժամանակ գնել այդ ցորենը ամենաաժան գնով առանց հետաքրքրուելու իմանալ, թէ նա ինչ բերրութեան աստիճանի հողից է եկած. բայց որովհետև նոյն տեսակ ցորենի թանկ ծախողները կ'մնան կանգնած, եթէ չուզենան ղիջել և յարմարուի միւս ծախողներից առաջարկած աժան գներին, կ'նշանակէ, թէ միևնոյն տեսակի և յատկութեան ցորենը բոլոր վաճառողների մօտ պիտի միևնոյն ցածր գինը ունենայ: Ի հարկէ, այստեղ խօսքը տեղական գների մասին է. պատահական բացառութիւններ կարող են լինել, շնորհիւ այս կամ այն հանգամանքի. օրինակ, եթէ ապրանք գնողը խամ մարդ է և հենց առաջին պատահողից գնում է ապրանքը մի գնով, որից աւելի լաւ պայմանով կարելի էր մի ուրիշից գնել և այլն: Ուրեմն այդ ևս պարզ է որ, գները ձգտումն ունեն հաւասար լինել թէ լաւ և թէ աւելի ստոր հողերի արդիւնքների համար: Պնում է, ուրեմն, պատասխանել միայն վերջին հարցին՝ թէ արդեօք ինչ որոշ բարձրութիւն պէտք է ունենան նոյն իսկ այդ գները: Եւ Ռիկարդօն, որպէս Դուք յիշում էք, այդ հարցին ևս տալիս է ամենաբաւականացուցիչ պատասխան, շարունակելով մտածել իրան յատուկ խիստ և պարզ լոգիկով: Եւ իսկապէս, ենթադրելով, որ ստոր հողերի տէրերին ցորենի փութը նստել է 50, իսկ լաւ հողերի տէրերին՝ 30 կոպէկ, բայց միևնոյն ժամանակ հաստատած լինելով, որ նոքա երկուքն ևս միևնոյն գնով պէտք է ծախուեն, այդ գինը պէտք է լինի 50 կոպ. թէ 30 կոպէկ? Պատասխանը պարզ է. եթէ 30 կոպէկով ծախուի, վատ հողերի տէրերը կ'վնասուեն, որ միևնոյնն է, թէ նոքա կ'թողնեն իրենց հողերի մշակութիւնը: Ցորենի քանակութիւնը, այդ դէպքում, չի համապատասխանիլ ժողովուրդի կարօտութեան, և կամ, որպէս ընդունուած է քաղաքա-

տնտեսական լեզուում ասել, առաջարկը աւելի նուազ կ'լինի, քան պահանջը: Նշանակում է, թէ 30 կոպէկով չպիտի ծախուի ցորենը, այդ անկարելի է: Բայց և այս ակներև է, որ ցորենը պէտք է առնուազը 50 կոպէկով ծախուի, որպէս զի վատ հողերի տէրերը չվնասուեն: Իսկ եթէ այդ այդպէս է, լաւ հողերի տէրերը ոչ միայն աւելի կարող են շահուել, քան աւելի վատ հողերի տէրերը, այլ դրականապէս նոքա պէտք է որ շահուեն մի հանգամանքից, որի յառաջացնելու պատճառը ոչ թէ իրանք են, այլ հասարակութեան ընդհանուր առաջդիմութիւնը, որը մղեց և մղում է անարդիւնաւէտ համարուած հողերը մշակելու և արդիւնաւէտ կացուցանելու:

Անշուշտ, մարդուս կրիտիկական ոգին, այդ մտածողութիւնը անելուց յետ, բնականաբար ծնեցնում է մեր մտքի մէջ այսպիսի մի հարց՝ թէ արդեօք ինչու առաջդիմութիւնը, որը ամբողջ հասարակութեան հաւաքական ոյժերի արտադրութիւն է, նիւթապէս պէտք է միայն մի որոշ դասակարգի օգտին ծառայէ, այն է, հողատիրութեան մէջ, միայն լաւագոյն հողերի տէրերին. թէ ինչու առանց իրանց կողմից զոհաբերութիւն անելու և կամ իրանց սովորական ծախքը աւելցնելու, իւրաքանչիւր անգամ, երբ հարկաւոր է լինում ժողովուրդի պահանջը յագեցնելու համար աւելի ստոր հողերի մշակութեան դիմել, լաւագոյն հողերի տէրերը պէտք է բացի կապիտալի տոկօսից և աշխատանքի վարձատրութիւնից դեռ մի աւելորդ օգուտ էլ ստանան, մի օգուտ, որին Ռիկարդօն ռենտ անունն է տալիս:

Շատերը նոցանից, տիկիններ և պարոններ, որոնք Ռիկարդօի թէօրէի դէմ բողոքում են և կամ որոնք եթէ ընդունում էլ են, բայց իրենց գրութիւնների մէջ

թէօրէն ոչնչացնելու չափ սորան շրջապատում են ամեն տեսակ նկատողութիւններով, զգուշացնող խրատներով, և կամ որոնք քննադատութիւնով են սկսում այդ թէօրէի մեկնութիւնը, այդ հեղինակները, ասում եմ, ոչ միայն անգնուացնում են գիտութիւնը, այլ և մեծ մասամբ այդ վարմունքով վկայութիւն են տալիս իրենց մտաւոր անընդունակութեան։ Դոքա չէին քաշվում, մանաւանդ մի քանի տասնեակ տարիներ առաջ, յայտնել, (իսկ եթէ շատերը չէին յայտնում, նոքա գոնէ սրտի խորքի մէջ թաքուն պահած ունէին այս միտքը), թէ իբր Ռիկարդօն իւր թէօրէով և ուրեմն նորան հետևողները դրդում են ժողովուրդը կալուածատէրերի դէմ։ Դրդել ժողովուրդը կալուածատէրերի, հողատէրերի դէմ! Դանը խօսք, որը սակայն ոչինչ խելացի հիմք չունէ այն պարզ ու հասարակ պատճառով, որ, ըստ Ռիկարդօի թէօրէի, հողային ռենտ ստեղծողը ոչ թէ լաւագոյն հողերի տէրերն են, այլ, որպէս դուք ինքներդ դատել կարող էք, հողատէրերի կամքից բոլորովին դուրս և անկախ մի հանգամանք։ Մինթէ այդ լաւագոյն հողերի տէրերն են, որ ստիպում են երկրի բնակիչներին մշակել մինչ այնմ պարապ մնացած հողերը, և այդ՝ այն շահասիրական դիտաւորութեամբ, որպէս զի դորանով իրանք ռենտ կամ անվաստակած մի օգուտ ստանալու հաճելի դրութեան մէջ գտնուին? Իսկ եթէ դուք գիտէք, որ ըստ Ռիկարդօի թէօրի այդ այդպէս չէ, էլ որտեղից կարող է անձնական ատելութիւն ծնուել կալուածատէրերի դէմ? Հարկաւ, միայն այդ թէօրէն սխալ մեկնելուց։ Բողոքեցէք, ուրեմն, նորան սխալ մեկնողների և ոչ թէ թէօրէի դէմ, եթէ միայն սորա դէմ ունեցած արգումենտը վերոյիշեալ հանգամանքն է։ Ի հարկ է, այս ևս ճիշդ է, և այդ հանգամանքը վկայում է ոչ

շատ ինպաստ մարդկային կամքի ու խելքի բարձրութեան, – այս ևս անուրանալի է, ասում եմ, որ մարդկերանց մեծամասնութիւնը, եթէ սա միայն զինուորուած չէ իրերը ու գաղափարները իրարից որոշելու համար անհրաժեշտ կրթութեամբ, դժուարութեամբ կարողանում է զանազանել անձնաւորութիւնը—պրինցիպից, սկզբմունքից։ Այնպէս, որպէս ընդհանուր կրթութիւնը կայ այժմ ոչ միայն մեզանում, այլ և Եւրոպայում, մարդկերանց մեծամասնութեան համար գրեթէ անմատչելի են բուն առարկայական խորհրդածութիւնները։ Մէկին ասում ես, թէ այս ինչ օրէնքը, այս ինչ իրաւունքը, որը օրէնքով տուած է ժողովուրդին, այս կամ այն պակասութիւնը ունէ. թէ օրինակ հողային սեպհականութեան իրաւունքով մարդս, յայտնի հանգամանքների մէջ, օգտվում է աւելի, քան նորա աշխատանքը և կապիտալը արժեն և թէ ուրեմն այդ հանգամանքի մէջ մի չարիք կայ, որի դէմը պէտք է առած, եթէ հնարաւոր է,— նա պատասխանում է՝ ինչու! Պետրոսը, որը կալուածատէր է, լաւ մարդ է, բարի է, և այլն և կամ, նայած տրամադրութեան, ի հարկ է՝ թէ որ այդպէս է, կալուածատէրերը պէտք է վատ մարդիկ լինին և ահա նա սկսեց դուցէ ատել Պետրոսին։ Այդ մտքով է, որ մենք ասում ենք, թէ ամբոխը մեծ մասամբ շփոթում է իրաւունքը, որը ընդհանրութեան համար նշանակած մի հաստատութիւն է—այն անձնաւորութիւնների հետ, որոնք, ըստ պատեհին, այդ իրաւունքի վայելողներն են։ Ահա ինչու սեպհականութեան հաստատութեան դէմ արած ամենաչնչին կրիտիկն անդամ յայտնի և անշուշտ ոչ շատ օգտաւէտ ուղղութեան տէր մարդիկ կարողանում են հեշտութեամբ վոխադրել քարոզելու մի միջոցի՝ դա-

տակարդ դասակարգի դէմ զինաւորելու, նոցա մէջ փոխադարձ ատելութեան զգացմունք յարուցանելու:

Սակայն, որքան և պարսաւելի լինի այդ տեսակ վարմունքը, որքան և պժգելի լինի դեմագոգային այդ մոլութիւնը, որը, նոր ժամանակներումս, մանաւանդ եւրոպական վերջի հարիւր տարուայ պատմութեան մէջ բազմաթիւ քաղաքական տգեղութիւնների տեղիք տուեց, — այնու ամենայնիւ նա երբէք չպիտի մի հիմք ծառայէ ճշմարտութեան մատենալու միակ հաստատ ճանապարհը — գիտական ազատ հետազօտութիւնը խանգարելու, նորա դէմ մի որևիցէ արգելք դնելու: Մեր խօսքը այստեղ մանաւանդ այն շրջանների կողմնապահութեան վերայ է, որը առաջ շատ յաճախ հաւակնութիւն ունէին դատողութիւններ անել գիտութեան այս կամ այն ուղղութեան վերայ, մէկը ճիշդ հրատարակելով, իսկ միւսը կեղծ և վտանգաւոր ցոյց տալով, և նորան ամեն կերպ խեղդելու ջանալով: Վտանգաւոր միջոց! Գիտութեան վրայ արած վերահսկողութիւնը ամենաթիւր միջոցն է նորա արժանաւորութիւնը հասարակութիւնից ճանաչել տալու և սխալ գաղափարների դէմ յաջողութեամբ կռուելու համար: Պատճառները շատ են, բայց դոցանից ամենագլխաւորը, ըստ իմ կարծիքի, հետևեալ հանգամանքներն են. գիտութեան, մանաւանդ քաղաքական գիտութիւնների մէջ յայտնած ամեն մի միտք ուրիշներին, առաջի անգամից, այնքան պարզ և հասկանալի չէ լինում, որքան իրան այդ մտքի հեղինակին. և նոյն իսկ հեղինակը ինքը, ամենայաճախ անգամ, դժուարանում է իւր միտքը, որը գուցէ ինքն ըստ ինքեան միանգամայն ճիշդ է, գրական փաստերով հաստատելու: Այլ հանգամանք. նկատուած է, և ձեզնից նոքա, տիկիններ և պարոններ, որոնք առիթ

ունեցած կ'լինին մի հարց պատմական ձևով ուսումնասիրելու, ինձ հետ անշուշտ կ'համաձայնուեն, որ մի ծանր հարցի լուծելը և կամ մի երևոյթի ճիշտ մեկնելը այնքան դժուար բան է, որ դորա համար հարկաւորվում են առհասարակ գիտնականների ամբողջ սերունդներ: Առաջինը միայն փորձ է փորձում հարցը դնել. յետոյ մի ուրիշը, ով գիտէ քանի քանի տարիներից յետ, երբ ամենքը գուցէ արդէն մոռացած են այն առաջնի դրած հարցը, այդ երկրորդը, ասում եմ, թէ առաջնից դրդուած և թէ ինքնարոյն կերպով առաջարկում է նոյն հարցը գուցէ մի քանի փոփոխութիւններով և փորձ է փորձում նորան լուծել, բայց լուծում է գուցէ ամենաանկատար և անդոյացուցիչ կերպով: Հանդէս է ելնում յետոյ մի երրորդը, որը աշխատում է ցոյց տալ երկրորդի մեկնողութեան թերութիւնները և ջանում է իւր կողմից աւելի ընդունելի բացատրութիւններ տալ. և այսպէս շարունակ, մինչև որ կրկին տասնեակ տարիներից յետ, հանդէս է ելնում մի չորրորդը, հինգերորդը, որը արդէն իրեն աւելի պարզած ունենալով հարցի էութիւնը, ամենախորը հետազօտութիւնների վրայ հիմնուած, արդէն մի լուծում, մի մեկնութիւն է տալիս, որը, եթէ իւր մի քանի անկատարութիւններով մեղանչէ ևս, այնուամենայնիւ գիտութեան մնայուն սեպհականութիւն է համարվում, այն աստիճանի նա բարձր է ամեն տեսակ կրիտիկից: Ը այդ է ամեն մի գիտութեան բազմաթիւ թէօրէների մեծամասնութեան պատմական ամփոփ նկարագիրը: Արդ, ես հարցնում եմ ձեզ, տիկիններ և պարոններ, եթէ գիտական ամեն մի թէօրէի, մի գաղափարի կազմուելու եղանակը այդպէս է, եթէ ամեն մի հարց, մինչև որ սա գիտական լուծումը ստանայ, պէտք է, թոյլ տուէք ինձ այս գարձուածքը, պէտք է, ասում եմ, այդքան երկար երկունքների մէջ

գտնուի, պէտք է մինչ նրա պարզելը տասնեակ տարի-ներով գիտնական քամոզութեան ենթարկուի, — այն ատէն ոչ միայն մի յայտնի հասարակական շրջան, այլ ո՞ր գիտնականների մի խումբ, մի ակադեմիա անգամ կարող է իւր վեսոն, իւր »ոչ»ը դնել գիտութեան մէջ յայտնած այս կամ այն կարծիքի վերայ?!

Տժբաղդապէս պէտք է ասած, որ այդ տեսակ բրռնութիւններ սակաւ չեն գործուած գիտութեան ազատ ծաւալման վերայ Եւրոպայի նոյն իսկ այն երկիրներում, որոնք իրենց ամենից շատ նախանձախնդիր են ցոյց տուած ազատութեան համար: Այդ ոչ շատ գեղեցիկ զոյնով փայլել են մանաւանդ Ֆրանսիայի կառավարիչները: Մենք, ի հարկէ, չենք խօսում շատ հեռու անցեալի մասին, — մեր խօսքը նոյն իսկ մեր այժմեայ 19-երորդ դարուայ վերայ է: Այդ, մի տնտեսագէտ, որպէս Ժան-Բոտիստ Սէյ, Նապոլէօն I-ի ամբողջ թագաւորութեան ժամանակ ստիպուած եղաւ բերանը փակ և գրիչը զսպած պահել, որովհետև կայսրի իշխանութիւնը համապատասխան չէր այն մեկնութիւններին, որ Սէյը տալիս էր յայտնի տնտեսական և հասարակաց երևոյթներին! Միւս կողմից, դեռ մինչև այժմեայ օրերս, շնորհիւ շատ կարևոր կէտերում դարուայ ոգուն բնաւ չհամապատասխանող Ֆրանսիական համալսարանական կազմակերպութեան, մինչ օրս, ասում եմ, կարծես թէ օրէնք է այդ երկրում, որ քաղաքատնտեսութեան պրոֆեսորները անպատճառ պատկանեն իւր անկախութիւնը վաղուց ցոյց տուած մի ուղղութեան, որին հասարակօրէն Սմիթեան և կամ այլապէս մանչեստրեան են կոչում և որի հետ մենք մեր յետագայ դասախօսութիւնների մէջ ծանօթանալու յաճախ անգամ դեռ առիթ պիտի ունենանք: Այդ ուղղութեան մասին բաւա-

կան է այստեղ միայն այնքանը յիշել, որ այն ձևով, որպէս նորան ըմբռնել են մանաւանդ Ֆրանսիական տնտեսագէտները, իսկ մասնաւորապէս անուանի Ֆրիդերիկ Բաստիա, որը բազմաթիւ հետևողներ ունեցաւ թէ իւր երկրում և թէ Եւրոպայի այլ երկիրներում, — այդ ուղղութիւնը վերին աստիճանի օպտիմիստական, լաւատէսական, չափից դուրս մխիթարական աչքով է նայում տնտեսական և հասարակաց արդի հաստատութիւնների վերայ, որոնք են՝ անհատական սեպհականութիւն ամեն բանում և մրցութիւն ամենալիակատար, որ կարելի է միայն իրագործել: Բաստիան ընդունում է Ադամ Սմիթի հետ, բայց սորանից աւելի բացարձակ կերպով, որ մարդիկ միայն «իրենց շահն» են ճանաչում և որ, եթէ մենք ցանկանում ենք, որ մի հասարակութեան մէջ կատարեալ «ներդաշնակութիւն» տիրէ, պէտք է թողած, որ ամեն մարդ մրցութեամբ և կամ ամենալիակատար ազատութեամբ իւր անձնական շահերը պաշտպանել կարողանալու դրութեան մէջ լինի:

Տիկիններ և պարոններ, այս ընդմիջումը, որ ես արի, բաւականի երկար էր. բայց յոյս ունեմ, որ Դուք ինձ այդ կ'ներէք այն կապը ակնյանդէպ առնելով, որ ունէ գիտութեան աւանդումը իշխող գրողներից այն երկիրներում մանաւանդ, ուր կենտրոնական վարչութիւնը իրան կոչուած է համարում խառնուելու նաև բուն գիտնական խնդիրների մէջ: Շշեղուենք մեր հարցից, որը Ռիկարդօի ռենտի թէօրէն է: Ես Ձեզ ցոյց տուի, թէ ինչպէս յայտնի գրողներ, սեպհականութեան հաստատութեան անխախտութեան անունով, աշխատում էին ջրել այդ, որպէս Դուք ինքներդ համոզուել կարող էք, ուղիղ և սրամիտ թէօրէն: Ինչ ասել կ'ուզէ, որ Ռիկարդօի հակառակորդ-

ները, չկարողանալով Ռիկարդոի մտածողութեան եղանակի մէջ մի կէտ անգամ սխալ գտնել, հակուած պէտք է լինէին հեղինակին իւր սեպհական խօսքերով, յերքեալս համար է երկու ձեռքերով բռնել ամեն մի քննադատութիւն որը Ռեկարդոի թէօրէի իսկութեան վերայ կարող էր գէթ ըստ երևոյթին մի բիծ գցել։ Պարզ է ուրեմն, թէ ինչու Կարէյի քննադատութիւնը որի էութեան հետևուք արդէն ծանօթ էք, իւր ժամանակին մեծ աղմուկ հանեց։

2013